

ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵՐԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՆՊԱՏԻ ՀԼՅՐԵՐԻ ՄՕՏ



Հեղինակ՝

ԼՈՒՍԻԷՆ ՂԸՆՈՅ

Թարգմանեց՝

ՄԱՇՏՈՅ ՎԱԿԷ ՂԱԶԱՐԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Սիրելի Ընթերցող,

օգտագործելով Հաղորդակցութեան ներկայ միջոցները, անձնական նախաձեռնութեամբ՝ փորձում եմ իմ համեստ նպաստս բերել մեր ազգային հոգեւոր կեանքին, նաեւ համացանցի միջոցով տարածելով քրիստոնէական փոքրիկ գրութիւններ, այսպիսով յաղթահարելով աշխարհագրական սահմանափակումներն ու առաքումի ժամանակները: Փափաքս է հաղորդել քեզ այն՝ ինչ ինձ հաղորդուեց Նախախնամութեան գծած զանազան ճանապարհներով:

Կարող ես քո մասնակցութիւնը բերել Աստուծոյ Խօսքին մատուցուած այս ծառայութեանը, հաղորդելով քո մերձաւոր ու հեռաւոր ծանօթներին ահա այս համացանցային հասցէն.

gradaran@mashtoz.org

Այս հասցէին գրելով, նրանց հասցէները նոյնպէս կ'անցնեն իմ անուանացանկի մէջ եւ յաջորդաբար նրանք նոյնպէս կը ստանան հոգեւոր նոր գրութիւնների հրատարակումը տեղեկացնող նամակները: Այս ծառայութիւնն անվճար է:

Այս գործին որեւէ առաջարկ կամ օգնութիւն հասցնելու, որեւէ տեղեկութիւն խնդրելու կամ հարցումներ ներկայացնելու համար կարող ես գործածել համացանցային վերոնշեալ հասցէն:

*Կանխայայտ շնորհակալութեամբ եւ լաւագոյն մաղթանքներով,
եղբայրդ ի Քրիստոս Յիսուս՝*

Մաշտոց Վահէ Ղազարեան

ԼԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵՐԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԼՆԼՊԼՏԻ ՀԼՅՐԵՐԻ ԸՍՏ

Ժամանակակից հոգեւոր հեղինակներից մէկը բարեյաջող գաղափարն է ունեցել աւարտելու իր «*The desert a city*»¹ գիրքը՝ մէջբերելով երանութիւնների աւետարանական հատուածը, հաստատելով՝ որ Եգիպտոսի ու Պաղեստինի առաջին վանականների կեանքն իրենից ներկայացնում էր աւետարանական երանութիւնների ուշադրութեան արժանի մեկնաբանումն ու իրագործումը²: Իրականում, Հայրերի խօսքերը պարզորոշ սակաւաթիւ մէջբերումներ են կատարում երանութիւնների աւետարանական հատուածից³, եւ սա չի զարմացնում բոլոր նրանց՝ ովքեր գիտեն՝ թէ Անապատի Հայրերը որքա՛ն էին խուսափում իրենց գիտութիւնը ցուցադրելուց: Աստուածաշնչի ճանաչողութիւնը նրանց համար միակ գիտութիւնն էր, եւ սուրբգրային խօսքերի շուրջ խորհրդածութիւնն այնքան սերտորէն էր կապուած նրանց «վանական գործունէութեան»⁴ – նրանց հոգեւոր կեանքին, կ’ասէինք մենք այսօր – որ աստուածաշնչեան որեւէ մէջբերում կարող էր թուալ որպէս սեփական բարեպաշտութեան ցուցադրութիւն: Ինչպէ՞ս կարող ենք, ուրեմն, ծերունիների շուրջից քաղել աւետարանական երանութիւններից որեւէ մէկի հուշակումը: Տրամադիր լինելով աւելի նզովելու՝ քան երանացնելու իրենք իրենց⁴, ապոֆտէզմաների հեղինակներն այնուամենայնիւ ունեն իրական երջանկութեան բացարձակօրէն աւետարանական ըմբռնում եւ անխաբ փորձառութիւն: Զանանք մի արձագանք գտնել նրանց խօսքերում ու արարքներում:

Երանի՛ հոգով աղբատներին

«Սա է բոլորի մէջ առաջին տեղը գրաւող երանութիւնը», հաստատում է Քասսիանոսը⁵: Երբ Օգոստինոսը իր Խոստովանութիւնների գրքում յիշում է Տրէվիրի միայնակեացներին, որոնց մասին իրեն պատմել էր իր ընկերներից Պոնտիչանոսը, անուանում է նրանց պարզապէս «հոգով աղքատներ, որոնց է պատկանում երկնքի արքայութիւնը»⁶: Մեկնաբանելով առաջին երանութիւնը, Օգոստինոսը սովորաբար շեշտը դնում է այս աղքատութեան հոգեւոր բնոյթի վրայ, այն նոյնացնելով խոնարհութեան հետ⁷, բայց երբ սոյն երանութիւնը վերագրում է վանականներին, թուում է՝ թէ կամենում է նախեւառաջ ընդգծել այն ամբողջական հրաժարումը, որ գործադրում էին Քրիստոսի այդ ճշմարիտ աշակերտները: Արդի մեկնողական գիտութիւնները նոյնպէս, վստահութիւն չցուցաբերելով չափազանց հոգեւորական բացատրութիւնների նկատմամբ, հաստատում են՝ որ Յիսուսի կողմից երանելի հուշակուած աղքատները նախեւառաջ

¹ D. J. Chitty, *The desert a city*, Oxford 1966.

² Նոյն, էջ 181.

³ Ընդհանրապէս, աստուածաշնչեան մէջբերումները հազուադէպ են ապոֆտէզմաներում; հմմտ. J.-C. Guy, *DS*, t. IV, col. 161.

⁴ Ամոնաս 1; *Nau* 141, 581, 587.

⁵ *Conl.*, 10, 11.

⁶ *Խոստովանութիւններ*, Ը 14.

⁷ Հմմտ. Լեռան քարոզը, Ա 2.

իսկապէս չքաւոր եւ արհամարհուած անձերն էին¹: Երանելի են հռչակուում ո՛չ որովհետեւ այդպիսիք են, այլ որովհետեւ իրենց վիճակի պատճառով՝ նախընտրեալ առարկան են աստուածային բարեացակամութեան, նրանք՝ որոնց է առաջին հերթին ուղղուած փրկութեան բարի լուրը:

Վանական լինելու էութիւնն իսկ այս է. վանականները «նրանք են՝ որ կամենում են փրկուել», որ ուրիշ ոչինչ չեն փափաքում եւ միմիայն այս նպատակին են նուիրում իրենց ամբողջ կեանքն ու ուժերը: Հետեւաբար, ամբողջովին բնական է՝ որ ստեղծում են իրենց այդ նպատակին հասնելու համար ամենայարմար պայմանները: Դէպի անապատ փախուստը պէտք է հասկանալ՝ այս տեսանկիւնից մեկնելով. «ո՛չ պարզ փախուստ էր, ո՛չ էլ նիւթական կեանքի մերժում որպէս չար իրողութիւն, ... այլ իր արդարացումը գտնում էր Աստուծոյ հանդէպ հաւատքի մի հզօր արմատականութեան մէջ»²: Նախեւառաջ փնտռտուքն էր կեանքի որոշակի պայմանների ու միջավայրի, որոնք Աւետարանի հիմքի վրայ ճանաչուում էին որպէս ամենայարմարը՝ հայթայթելու համար այդքա՛ն փափաքելի փրկութիւնը: Մեր արդի աշխարհում, որ ծայրաստիճան ալեկոծ է ու աղմկալի, աւելի տրամադիր ենք ընկալելու անապատ որպէս լուսութեան ու խաղաղութեան հովուերգական մի վայր: Առաջին վանականների, ինչպէս նաեւ ամբողջ աստուածաշնչեան աւանդութեան համար, մինչդեռ, ամենաանապատ ու մարդկային պաշարներից ամբողջովին զուրկ վայրն էր: Ինքն իրեն լքուած, վայրի գազանների ու սատանաների յարձակումներին ենթակայ, մարդը կարծես ստիպուած է «Աստուծոյ առաջ նետելու իր անուժութիւնը»³ եւ ամէն բան սպասելու Նրա նախախնամութիւնից ու ողորմութիւնից: Նիւթական ու մարմնական անընչութիւնը նպաստում է հոգու այն դիրքորոշմանը, որ յատուկ է արարածին՝ իր Արարչի դիմաց: Այսպիսով, իրական աղքատութիւնը ծնում եւ ապա սնուցում ու գօրացնում է հոգեւոր աղքատութիւնը. «Ով ոչինչ չունի եւ ապրում է աղքատաբար, հասնում է մեծ խոնարհութեան, խորհելով՝ որ ոչ մի բարի բան չի կատարել, որեւէ մէկին ոչինչ չի տուել, այլ աւելի ինքն է՝ որ կարիքն ունի ողորմութիւն ստանալու: Այսպէս ապրեցին մեր Հայրերը, այսպէս է՝ որ Աբբա Արսէնը գտաւ Աստուծուն»⁴: «Ամէնից առաջ կարիքն ունենք խոնարհութեան ... »: Անապատի Հայրերը հազարաւոր եղանակներով չեն յոգնում հռչակելու խոնարհութեան անհրաժեշտութիւնը, որը մարդու համար անփոխարինելի է՝ ինչպէս օդը, որ շնչում ենք⁵: Ամմա Սինքլէտիկայի համաձայն, «ինչպէս որ անհնարին է նաև շինել առանց գամերի, նոյնպէս անհնարին է՝ որ մարդը փրկուի առանց խոնարհութեան»⁶: Խոնարհութեան այս առաջնային կարեւորութեան ամենահամոզիչ փաստը ճիշտ այն է, որ խոնարհութեան առաքինութիւնն է առարկան առաջին երանութեան. «Հարկաւոր է, որ վանականն ամէնից առաջ գործադրի խոնարհութիւնը, որովհետեւ սա է Փրկչի առաջին պատուիրանը: Նա յիրաւի ասաց. "Երանի՛ հոգով աղքատներին, որովհետեւ նրանցն է երկնքի արքայութիւնը"»⁷: Աբբա Լոնջինոյի համաձայն, խոնարհութիւնն է անկասկած «ամենամեծ առաքինութիւնը, որովհետեւ ... Տէրը բոլորից առաջ երանելի է հռչակում հոգով աղքատներին»⁸:

Ոչ ոք չի կարողացել Դորոթէոս Գաղացուց աւելի լաւ ներկայացնել ծերերի ուսուցումները խոնարհութեան մասին: Պնդելով հանդերձ՝ թէ անհնարին է

¹ Հմմտ. J. Dupont, *Le beatitudini*, Roma 1973 e 1977, vol. I, pp. 521-575.

² D. J. Chitty, *The desert a city*, p. XVI.

³ Ագաթոն 21.

⁴ *Nau* 592/25.

⁵ Պիմէն 49.

⁶ Սինքլէտիկա 27.

⁷ Յովհաննէս Թէբայիդցի.

⁸ *Nau* 558.

ըմբռնել եւ բացատրել Սրբերի կատարեալ խոնարհութիւնը, Վարք Հարանցի այս սիրահար ընթերցողն այնուամենայնիւ նկատել է տալիս՝ որ «ծերերի խօսքերից ոմանք թոյլատրում են տեսնել այդ խոնարհութիւնը»¹, խօսքեր՝ որ կարող են դատարկ թուալ, բայց դրանց ծանօթ հոգիները ընդունակ են ընկալելու անկեղծութեան, ճշմարտութեան եւ վաւերականութեան շեշտը: Սովորաբար մենք ճանաչում ենք միայն պտուղները, մինչ նրանք ընկալում են ծառի պտղաբերութիւնը եւ այն կենսական աւելը՝ որ վեր է բարձրանում արմատներից: Միւս երանութիւնները մեր համար հնարաւոր են դարձնում բացայայտումը խոնարհութեան զանազան հետեւանքների, դրսեւորումների ու արդիւնքների, բայց այդ երանութիւններից ոմանք պէտք է որ շաղկապուեն առաջինի հետ, այնքան որ լաւ են հայելացնում անապատի այս իրական աղքատների հոգեվիճակը:

«Հայր Մեգեթոնի մասին պատմում էին՝ թէ շատ խոնարհ էր ...»: Այս ծերունուց մեզ հասել են սակաւաթիւ խօսքեր միայն, որոնք ոչնչով արտակարգ չեն: Այնուհանդերձ, իր կեանքի մի փոքրիկ համառօտում արժանի է այստեղ մէջբերուելու. «Պատմում էին՝ թէ Հայր Մեգեթոնը սովոր էր դուրս ելնել խուցից, եւ եթէ մտադրուում էր լքել այդ վայրը՝ այլեւս չէր վերադառնում խուց, քանի որ ոչինչ չունէր այս աշխարհի ինչքերից, բացի մի ասեղից՝ որով կարում էր արմաւենու ճիւղերը: Օրական երեք փոքրիկ զամբիւղներ էր հիւսում, իր ապրուստի համար»²: Աբբա Սիզոնի մասին շատ բան գիտենք, ամենասովորականներից մինչեւ ամենաարտասովորները, բայց ինչպէս յաճախ է պատահում Սրբերի կեանքում՝ ամենասովորականները ամենանշանակալիներն են. «Մի քանի եղբայրներ այցելութեան գնացին Հայր Սիզոնին, նրանից մի խօսք լսելու համար, բայց նրանց ոչինչ չասաց: Այն ամէնը՝ որ ասաց, սա էր. "Ներէք ինձ": Տեսնելով նրա հիւսած զամբիւղները, հարցրին նրա աշակերտին, որի անունը Աբրահամ էր. "Ինչո՞ւ էք զամբիւղներ հիւսում": Նա պատասխանեց. "Վաճառում ենք այստեղ ու այնտեղ": Սա լսելով, ծերունին աւելացրեց. "Եւ Սիզոնն այստեղից ու այնտեղից է հայթայթում իր կերակուրը": Մեծ օգուտ քաղեցին այս խօսքերից եւ վերադարձան ուրախ, օգտուելով նրա խոնարհութիւնից»³: Եւ ահա ամենահմայիչը. երբ մահուան անկողնում պառկած, տեսնում է Մարգարէներին ու Առաքեալներին, որոնք իրեն ընդառաջ էին գալիս Աբբա Անտոնի հետ միասին, իր հոգին փոխադրելու յանձնարարութիւնը ստացած հրեշտակներին Սիզոնն խնդրում է մի սակաւիկ ինչ ժամանակով յետաձգել մեկնումը, որպէսզի կարողանայ մի քիչ ապաշխարել, որովհետեւ «իսկապէս չեմ կարծում՝ թէ երբեւէ սկսել եմ»⁴:

Ծերունիների մեծամասնութեան համար, խոնարհութիւնը նշանակում էր շարունակական «ինքնաարհամարհանք». չէին յոգնում իրենք իրենց մեղաւորներ անուանելուց, բոլոր մարդկանց մէջ ամէն տեսանկիւնից դիտուած ամենաթշուառներ ու ամենաանարժէքներ նկատուելուց: Բայց նրանց հոգեւոր աղքատութիւնը թերեւս ամենաուժգին կերպով հանդէս է գալիս, երբ ամենակատարեալները խոստովանում են իրենց, յատկապէս մահուան պահին, բարի գործերից բացարձակօրէն գուրկ: Մի օր, ոմանք խուցի ներսից լսում են Արսէնի ձայնը, որ աղաղակում է առ Աստուած. «Ո՛վ Աստուած, մի՛ լքիր ինձ: Բարի ոչինչ չեմ գործել աչքերիդ առաջ, բայց ըստ Քո բարութեան՝ պարգեւիր ինձ սկսելու շնորհը»⁵: Մաթոնն ասում էր. «Երբ երիտասարդ էի, ասում էի ինքս ինձ. "Թերեւս ինչ որ մի բարի բան գործում եմ": Բայց այժմ, երբ այլեւս ծեր եմ, տեսնում եմ՝ որ ոչ մի բարի գործ չունեմ»⁶: Նմանապէս Աբբա Պամբոն. «Գնում եմ ներկայանալու

¹ Դորոթէոս 37.

² Մեգեթոն 1-2.

³ Սիզոն 16.

⁴ Սիզոն 14; Հմմտ. Սիզոն 49.

⁵ Արսէն 3.

⁶ Մաթոն 3.

Աստծուն որպէս մէկը՝ որ եւ ոչ իսկ սկսել է ծառայել Նրան»¹: Բոլոր այս սուրբ ծերունիները խորքում ասում են միեւնոյն իրականութիւնը, առանց սակայն կրկնելու: Երբ Աբբա Պափնոտիոսը մահամերձ պառկած էր, իր հետ ապրող եղբայրներն ասացին. «Երանի՛ քեզ, ով հայր մեր, որովհետեւ գնում ես արքայութիւն»:² Եւ Պափնոտիոսը պատասխանեց. «Ինչ վերաբերում է ինձ, միայն այն գիտեմ՝ որ կեանքս ծաղրի առարկայ դարձրի»²:

Երանի՛ հեզերին

Մատթէոսին յատուկ այս երանութեան ծնունդը կարելի է համարել առաջինի կրկնութիւնը, սահմանուած՝ «հոգով» աղքատութեանը տրուած բարոյական արժէքը ամրապնդելուն³: Ինչ էլ որ լինի, սակայն, հեզութիւնը սերտօրէն կապուած է խոնարհութեան հետ նոյնացուած հոգեւոր աղքատութեանը, կարելի է ասել՝ նրա դիմադժերից մէկն է: Խոնարհութիւնն ու հեզութիւնը խորքում միեւնոյն հոգեվիճակն են, միայն թէ հեզութիւնը վերաբերում է ուրիշների հետ յարաբերութեանը, ինչպէս յստակ կերպով երեւում է հեզութիւնը պատուիրող նորկտակարանեան հատուածների ամբողջութիւնից: Պօղոս Առաքեալը յատուկ կերպով փափաքում է, որ հեզութիւնը գործադրուի բոլոր մարդկանց նկատմամբ (Հմմտ. 2Տմ 2, 24; Տիտ 3, 2): Հեզութեան առաքինութիւնը պատշաճում է յատկապէս նրանց՝ ովքեր կրթում եւ սրբագրում են ուրիշների վարքը, նմանուելով «հեզ եւ սրտով խոնարհ» Յիսուսին (Մտթ 11, 29):

Հեզութիւնը քիչ անգամներ է յիշուած ապոֆտէզմաներում, եւ գրեթէ միշտ մաս է կազմում առաքինութիւնների ընդհանուր ցանկերին, որոնց մէջ չի թուում՝ թէ գրաւում է յատուկ մի տեղ: «Պահպանենք հեզութիւնը, համակամութիւնը, համբերութիւնը եւ սէրը. սրանք են առաքինութիւնները՝ որ մէկին վանական են դարձնում»⁴: Ամմա Թէոդորայի համաձայն, հոգեւոր ուսուցիչը «պէտք է լինի երկայնամիտ, հեզ, խոնարհ ... »⁵: Աբբա Գելասիոսը պնդում է աւելի. «Աղօթքը, սաղմոսերգութիւնը, մերձաւորիդ հետ յարաբերութիւններդ. ամէն բան թող խոնարհութեամբ ու հեզութեամբ լինի ... : Հեզահամբոյր եղիր ընկերներիդ հետ, սիրալիր՝ բոլոր նրանց հանդէպ՝ որ ենթակայ են քեզ ... : Հեզ եղիր՝ երբ խօսում ես, ուրախ եւ հաճելի ... կարեկից՝ բոլորի նկատմամբ»⁶: Աստուածաշնչեան ներշնչում ունեցող մի ապոֆտէզմա, որն այբբենական ժողովածոյում վերագրուած է Սինքլէտիկային, իրականում պատկանում է Հիպերիքոսին. «Նմանուիր մաքսաւորին, որպէսզի չդատապարտուես փարիսեցու հետ: Նմանուիր Մովսէսին, հետեւելով նրա հեզութեանը, քարեղէն սիրտդ ջրերի աղբիւր դարձնելու համար»⁷: Միեւնոյն ժողովածոյում Նեղոսին վերագրուած ապոֆտէզմաներից մէկը իրականում Եւագրիոսինն է. «Աղօթքը սերմն է հեզութեան եւ զայրոյթի զսպման»⁸: Այստեղ կարելի է յիշել, որ հեզութիւնը Եւագրիոսի գործերում գրաւում է շատ աւելի մեծ տեղ՝ քան Հայրերի խօսքերում, այն աստիճան՝ որ կարող ենք հաստատել՝ թէ «եւագրիոսական համակարգում հեզութիւնն է

¹ Պամբո 8.

² Eth. Coll., 13, 82.

³ J. Dupont, *Le beatitudini*, vol. II, p. 854.

⁴ *Sistematica greca*, I, 36.

⁵ Թէոդորա 6.

⁶ *Pater. Arm.*, II, 315.

⁷ Սինքլէտիկա 11.

⁸ Նեղոս 2.

ճգնաւորի գլխաւոր յատկութիւնը»¹: Նմանօրինակ կերպով, Պալլադիոսի «*Historia Lausiaca*» պատմագրքում, որը «Եւագրիոսի ոգիով շարադրուած մի գործ է»², բազմաթիւ միանձնեւ եւ միանձնուհիներ գովում են իրենց մեծ հեղութեան համար. Մարկոսը, Պոզիդոնը, Մովսէս Լիբիացին, Ազէլլան, Պափնոտիոսը, Մելանիան, Սողոմոնը³: «Իրօք, հեղութիւնն է – որի ձեռքբերումը ենթադրուած է կատարեալ տիրապետութիւն բոլոր կրքերի վրայ – այն առաքինութիւնը, որ ուղղակի մտցնում է երկնքի արքայութիւն, այսինքն՝ հայեցողութիւնից ներս»⁴:

Հեթանոս իմաստասէրներին անձանօթ չէր հեղութեան առաքինութիւնը⁵, եւ սա կարող է համոզիչ կերպով բացատրել՝ թէ ինչու է աւելի մեծ յարգանք վայելում Եւագրիոսի գործերում՝ քան ապոֆտէզմաներում: Կարող ենք ինքներս մեզ հարցնել՝ թէ արդեօք Անապատի Հայրերի կողմից հեղութեան արտաքսումը արդիւնքը չէ՞ այն երկդիմութեան, որ հեղութեան գաղափարը պահպանում էր աշխարհից փախուստի իրենց գաղափարականի նկատմամբ: Առաջին հայեացքից, անշուշտ որպէս հեղութեան օրինակ չենք կարող համարել Աբբա Արսէնին, որը կոպտութեամբ է վարում Աղեքսանդրիայի Արքեպիսկոպոսի եւ հռոմէացի տիկնոջ հետ, թէեւ վերջիններս իրեն այցելութեան էին եկել լաւագոյն տրամադրութիւններով⁶: Իսկ ի՞նչ կարող ենք ասել Աբբա Թէոդորոսի մասին, որը երբ հանդիպում էր որեւէ մէկի՝ «նման էր երկսայրի սրի»⁷: Եւ սակայն, երկուսից ոչ մէկը զգայագուրկ չէր. բազում ապոֆտէզմաներ են սա հաստատում Արսէնի վերաբերեալ⁸, մինչ Թէոդորոսի վերաբերեալ բաւական են մի քանի խօսքեր՝ բացայայտելու համար նրա զգացումները. «Ով ճանաչում է խուցի քաղցրութիւնը, փախչում է մարդկանցից, բայց ո՛չ արհամարհանքով». «Եթէ վճռականօրէն արմատախիլ չանեմ կարեկցանքի այս զգացումները, սրանք չեն թողնի ինձ վանական դառնալ»⁹: Յամենայն դէպս, բոլորից աւելի՝ այս երկու Աբբաներն է՝ որ «ատում էին մարդկային փառքը»¹⁰: Պղատոնի կողմից ըմբռնուած հեղութեանը հակառակ, Անապատի Հայրերի հեղութիւնը նրանց չի խանգարում լինել մի քիչ «վայրենի», հաւատարիմ մնալու համար վանական անդորրի (*hesychia*) եւ խոնարհութեան հական պահանջներին: Արիստոտէլի կողմից ըմբռնուած հեղութեանը համաձայն, մինչդեռ, Անապատի Հայրերի հեղութիւնը ընդդիմանում է բարկութեանը: Այս վերջին իմաստով, Եւագրիոսի եւ միւս ձերերի գաղափարականը ամբողջովին նոյնն է:

Երբեմն Մակարին, երբեմն էլ Եւագրիոսին վերագրուած մի ապոֆտէզմայի համաձայն, «վանականներին օտար բան է զայրանալը եւ որեւէ մէկին վշտացնելը»¹¹: Նախընտրելի է մէկը՝ որ մնացել է աշխարհում, բայց հեզ է, քան զայրացկոտ ու խռով վանականը¹²: «Վանական չէ՝ ով զայրանում է»¹³: Եթէ զայրանում է, ոչ մի օգուտ չի քաղում, նոյնիսկ եթէ ծոմապահութեամբ է

¹ R. Draguet, *Revue d'Histoire Ecclésiastique de Louvain*, t. 41 (1946), pp. 332-333.

² Նոյն, էջ 321.

³ *Hist. Laus.*, 18, 36, 41, 47, 54, 58.

⁴ I. Hausherr, *Les leçons d'un contemplatif. Le traité de l'Oraison d'Evagre de Pontique*, Paris 1960, p. 42.

⁵ Հմմտ. Պղատոն, *Convivio* 197d; *Repubblica* 558a; Արիստոտէլ, *Retorica* II, 3, 1.

⁶ Արսէն 7-8; 28.

⁷ Արսէն 31.

⁸ Արսէն 13, 16, 32, 34.

⁹ Թէոդորոս 14-15.

¹⁰ Արսէն 31.

¹¹ Դորոթէոս 89.

¹² Եւագրիոս, *Deti ai monaci* 34.

¹³ Պիմէն 91.

անցկացնում ամբողջ շաբաթը¹: Եւագրիոսը նոյնպէս հաստատում է նոյն բանը²: Ագաթոնը դե՛ռ աւելի արմատական է. «Զայրացկոտ մարդը, նոյնիսկ եթէ մեռելներին յարութիւն տայ, ընդունելի չէ Աստծուն»³:

Բարկութեան դէմ այս նզովքներէից եւ Աբբաներին վերագրուած «ծայրաստիճան հեզ» որակաւորումից աւելի – մի որակաւորում, որ կրկնեղբի նման ներկայ է Պալլադիոսի ամբողջ պատմագրքում – ապոֆտէզմաներում պատմուած դրուագներից մի քանիսը կարող են համոզել մեզ՝ թէ ինչպէս էր հեզութիւնը խոնարհութեան անբաժանելի ընկերը, «հեզ եւ սրտով խոնարհ» Յիսուսի այս հաւատարիմ աշակերտների հոգիներում: Պիմէնի մասին, որը վայելում էր «ծայրաստիճան հեզ» լինելու համբաւը⁴, մեզ է հասել այս յուզիչ ինքնավկայութիւնը. «Իրականում, երբ տեսնում եմ՝ որ եղբայրներից մէկը ննջում է (գիշերային ժամերգութեան ընթացքում), նրա գլուխը ծնկներինս եմ դնում եւ թողնում եմ՝ որ հանգստանայ»⁵:

Աբբա Իգիդորոսի մասին պատմուած է՝ թէ ի զօրու էր ամենակոպիտ եղբայրների սիրտն անգամ շարժելու. գաղտնիքը կայանում էր նրանում, որ քառասուն տարուայ ընթացքում երբեք թոյլ չէր տուել, որ զայրոյթը գլուխ բարձրացնէր իր հոգում⁶, հակառակ իր տաքարիւն բնաւորութեանը եւ բարկանալու բազմաթիւ առիթներին, որ ներկայացել էին⁷:

Նմանատիպ իրավիճակներում, Յովհաննէս Կարճահասակը նոյնպէս նախընտրել էր փախչել⁸, փաստելով՝ որ իր համար եւս հեզութիւնը դիւրին բան չէր. այն հեզութիւնը՝ որով նա հռչակաւոր էր, հիւրասէր ու համբերատար⁹. այն հեզութիւնը՝ որով կարողացել էր յուզել հանրածանօթ մեղաւոր կնոջ սիրտը եւ դարձի բերել նրան¹⁰: Ոմն հայր Յակոբն ասում էր. «Ով հեզ է երկրի վրայ, հրեշտակ կը լինի երկնքում»¹¹: Եգիպտոսի անապատներում, «մարդկանց մէջ ամենահեզերը» թւում է՝ թէ արդէն երկրի վրայ ընդունուել էին հրեշտակային խմբերից ներս: Ծերերից մէկը տեսիլքի մէջ տեսել էր՝ թէ Աբբա Մովսէսը ճամփորդում էր նաւակով, իսկ հրեշտակները կերակրում էին նրան մեղրամոմով¹²: Նախկին աւագակը, իրօք, դարձել էր հեզ՝ գառնուկի նման: Յովհաննէս Կարճահասակը, որ անապատում անցկացրած առաջին շրջանում երազել էր ապրել հրեշտակի նման, աւելի ուշ իր կողքին միշտ ներկայ ունէր մի հրեշտակ, որը նրան հով էր անում քնած ժամանակ¹³: Եւագրիոսը ասում էր, որ զայրոյթը մարդուն դարձնում է իրական սատանայ: Մի անանուն ծեր, որ կարող է լինել նոյն ինքն Եւագրիոսը, հաստատում է՝ թէ «ով չի չարչարում, չի վշտացնում, չի նզովում ոչ ոքի, կատարում է հրեշտակային մի գործ»¹⁴: Աբբա Ամոնէն իրաւացի էր, երբ մահուան անկողնում ասում է իր աշակերտ Յովհաննէս Թէբէացու մասին, որն

¹ Պիմէն 203.

² Կեղծ-Նեղոս, *De diversis malignis cogitationibus* 14.

³ Ագաթոն 19.

⁴ *Eth. Coll.*, 14, 65.

⁵ Պիմէն 92.

⁶ Իգիդորոս 1-3.

⁷ Իգիդորոս 5.

⁸ Յովհաննէս Կարճահասակ 5-6.

⁹ Յովհաննէս Կարճահասակ 18; Պիմէն 74.

¹⁰ Յովհաննէս Կարճահասակ 40.

¹¹ *QRT* 60.

¹² Արսէն 38.

¹³ Յովհաննէս Կարճահասակ 2, 33.

¹⁴ *Eth. Coll.*, 145.

իրեն ծառայել էր հերոսական համբերութեամբ, առանց երբեք ստանալու շնորհակալութեան նուազագույն արտայայտութիւն. «Հրեշտակ է, ո՛չ թէ մարդ»¹: Այսպիսով, վանականներով ու հրեշտակներով բնակուած, անապատը դարձել էր «հեղերի երկիրը»², դրախտի նախասրահը:

Երանի՛ վշտացածներին

«Յունարէն բառը, եւ դե՛ռ ակելի՛ երբայեցերէնը, նկարագրում են մի վիշտ՝ որ արտայայտուում է նաեւ արտաքուստ: Վիշտը, որի մասին խօսուում է, ուժգին տրտմութիւնը չէ միայն, այլ հասնում է այն աստիճանի՝ որ ժայթքում է դուրս. «penthountes»ները նման են իրենց ամենախոր զգացումներում խոցուած անձանց, կամ մարդկանց՝ որ ողբում են իրենց ննջեցեալներին: Ղուկասը, հետեւաբար, անհիմն կերպով չէ՛ որ այս երանութիւնն ուղղում է ոչ թէ «վշտացածներին», այլ նրանց՝ «ովքեր լացում են»: Ղուկասի կողմից մտցուած ճշգրտումը պէտք է օգնի մեզ՝ ըմբռնելու Մատթէոսի կողմից գործածուած եզրի իրական նշանակութիւնը»³:

Եթէ այս երանութիւնը, ինչպէս միւս բոլորը, շատ հազուադէպ է մէջբերուում Հայրերի խօսքերում, այնուամենայնիւ սա՛ է այն երանութիւնը՝ որն ամենաակնյայտ կերպով ներկայացնում է առաջին միայնակեացների հոգեկանութեան էական տարրերից մէկը, ճիշտ որովհետեւ այդ տարրը նրանց մօտ ներկայանում է ուժգնութեան եւ արտաքին պոռթկումի քիչ առաջ յիշուած իր կրկնակի բնոյթով: «Penthountes»ի ասորերէն համազօրը ('abila) այդ լեզուում դարձել է «միանձն» անուան հոմանիշը⁴: Ինչ վերաբերում է այս առաքինութեանը, Անապատի Հայրերը կարիքը չէին զգում թաքնուելու մեր նման հետաքրքրասէրներից. «Արցունքները թաքցնելու ոչ մի պատճառ չկայ. դրանք պարզապէս հոչակում են՝ թէ մեղաւորներ ենք»⁵: Ծերունիներից ոչ մէկը, «Դորոթէոսից բացի, ինքն իր առջեւ երբեք չի դրել այս հարցը. արդեօք կարո՞ղ է գոյութիւն ունենալ գղջում (penthos) առանց արցունքների: ... Թւում է՝ թէ Անապատի Հայրերը չէին հաւատում այն տեսակ վշտի անկեղծութեանը, որը չի մղում արտասուելու»⁶:

Չէին լալիս ինչ որ մի սիրելի անձի դիակի վրայ, այլ ակելի՛ մեղքով մահացու վիրաւորուած իրենց հոգիների համար: Հայրերից շատերը անապատ էին քաշուում ճիշտ այս նպատակով, նոյնիսկ եթէ առիթը չեն ունեցել բացայայտ հաստատելու՝ ինչպէս Աբբա Միլեգրոսը⁷: Անապատի Հայրերից ոմանք իրենց ուսերին էին կրում արեկոծ անցեալի ծանրութիւնը եւ նրանց կոչումը ստանում էր ակելի՛ «ապաշխարողական» նկարագիր: Աբբա Մովսէսը, մի նախկին ակազակ, որի ահաւոր գործերից մի քանիսը պատմուած են Պալլադիոսի պատմագրքում⁸, իրաւացի էր՝ երբ հաստատում էր՝ թէ «խենթութիւն կը լինէր, եթէ իր տանը մեռած մարդ ունեցողը թողնէր իր ննջեցեալին եւ գնար հարեւանի ննջեցեալին ողբալու»⁹. Բայց սա Անապատի Հայրերի համընդհանուր ուսուցումն է, որ գտնում ենք նաեւ

¹ Յովհաննէս Թէբէացի.

² Vita Ant., 17.

³ J. Dupont, *Le beatitudini*, vol. I, p. 552.

⁴ I. Hausherr, *Penthos*, Roma 1944, p. 24.

⁵ Նոյն, էջ 154.

⁶ Նոյն, էջ 188-189.

⁷ Միլեգրոս 2.

⁸ Hist. Laus., 19.

⁹ Մովսէս 18.

Աբբա Պիմէնի կամ Աբբա Պիորի խօսքերում¹: Աբբա Մակարի համար բաւական էր յիշելը՝ թէ ինչպէս էր պատանեկուծութեան տարիներին ընկերների հետ գողացուած մի թուզ կերել, որպէսզի բացուէր արցունքների հոսքը²: Մակարը, Յովհաննէս Կարճահասակի եւ Պիմէնի նման, թուում է՝ թէ չի կարողանում ըմբռնել՝ թէ ինչպէս կարելի է խուցի մէջ նստել առանց արտասուելու³: Հազիւ թէ մտաբերում էին, որ Աստուած կարող էր այս կամ այն պահին յանկարծակի այցելել իրենց, Օվրը եւ Թէոֆորոսը իւրաքանչիւրն իր խուցն էր քաշուում արցունքների մէջ⁴: Անտոնը բնակուծութիւն էր հաստատել մի դամբանում. վանականներից շատերը իրենց խուցի կողքին իրենք իրենց ձեռքերով փորում էին իրենց շիրիմը, ինչպէս այն ծերը՝ որն իր աշակերտի հետ ապրում էր Քղիզմայում⁵: Ապոֆտէգմաներն ընթերցելիս, ահամայ ուշադրութիւն են գրաւում հոգու խորքում վիշտը միշտ պահպանելու յաճախակի պատուէրները⁶, նմանուելով ազատ արձակուած ստրուկին՝ որը չի կամենում լքել տիրոջը եւ մնում է նրա տանը⁷, կամ էլ նմանուելով ստրուկին՝ որը շարունակ հետեւում է մարմնին⁸: Ծերունիներից մէկը մինչեւ իսկ հաստատում է՝ թէ հարկաւոր է անդադար արտասուել⁹, բայց անշուշտ յստակ է՝ որ այս պատուէրը չպէտք է տառացիօրէն հասկացուի եւ որ վիշտը չպէտք է արգելք հանդիսանայ այցելութեան եկող եղբայրների սիրալիր ընդունելութեանը¹⁰:

Ակնյայտ է, հետեւաբար, որ խօսքը նախեւառաջ վերաբերում է մի հոգեվիճակի, մի խոր ու ներքին դիրքորոշման, որը շատ աւելին է՝ քան պարզ առաքինութիւնը. ամէն բանի սկիզբն է, ինչպէս հաստատում է Աբբա Պիմէնը¹¹: «Օրէնքը վիշտն է»¹²: Միմիայն արցունքների շնորհիւ է, որ ջնջւում են մեղքերը եւ ձեռք են բերւում առաքինութիւնները. ուրիշ ճանապարհ չկայ¹³: Դատաստանի օրը, Տէրը մեզ չի յանդիմանելու հրաշքներ չգործելու կամ խորհուրդները եւ աստուածաբանութիւնը չճանաչելու համար. յանդիմանելու է, մինչդեռ, որովհետեւ չենք անցկացրել մեր կեանքի բոլոր օրերը մեր մեղքերի համար լալով ու ողբալով¹⁴: Իսկ այսպէս լալը անհնարին է առանց աղօթելու¹⁵. աւելին՝ լալ նշանակում է աղօթել. «Մեր բոլոր խեղճութիւնների համար արտասուում ենք Աստուծոյ բարութեան առաջ, մինչեւ որ Նա Ինքը ողորմի մեզ»¹⁶: Պողոս Մեծն ասում էր. «Ճահիճի մէջ եմ, ընկղմուել եմ մինչեւ կոկորդս եւ Աստուծոյ առաջ լալիս եմ՝ ասելով. Ողորմիր ինձ»¹⁷: Մի շարունակական աղօթք, ինչպէս վիշտը՝ որով սնուցւում է:

¹ Պիմէն 26, 72; Պիոր 3.

² Մակար 37.

³ Մակար 2, 27, 41; Յովհաննէս Կարճահասակ 19; Պիմէն 162.

⁴ Օվր 1.

⁵ Nau 592/1-2.

⁶ Պիմէն 26, 72.

⁷ Պետրոս Պիոնացի 2.

⁸ Nau 140.

⁹ Nau 141.

¹⁰ Յովսէփ 1; Nau 592/59.

¹¹ Պիմէն 69.

¹² Պետրոս Պիոնացի 2.

¹³ Պիմէն 119.

¹⁴ Scala, 7.

¹⁵ Մովսէս 18; Nau 572, 583.

¹⁶ Պիմէն 122.

¹⁷ Պողոս Մեծ 2.

Յայտնի է՝ որ ապոֆտէգմաների ամբողջութեան մէջ աւելի յանձնարարուում է յիշել սեփական մեղքերը՝ քան յիշել Աստծուն. բայց երբ յիշում ենք մեր մեղքերը եւ լալիս ենք Աստծոյ առաջ, մեզնում վառ է մնում մի իրական «Աստծոյ յիշատակ» (mneme Theou), որի գրաւականն է խոնարհութիւնը: Եւ Աստծոյ այս երանելի յիշատակը՝ ներկայացող նուազագոյն առիթի դէպքում անգամ անդադար արթնանում է ու բոցավառուում: Երբ հազիւ տեսաւ Աղեքսանդրիայի հանրածանօթ դերասանուհուն, Աբբա Պամբոն պոռթկաց արցունքների մէջ, խորհելով այդ խեղճ երիտասարդուհուն կորստեան վիճակի եւ այն փաստի շուրջ՝ որ «ես Աստծուն հաճելի լինելու այնքան եռանդ չունեմ՝ որքան նա ունի անարգ մարդկանց համար»¹: Ձեռագրեր ընդօրինակող մի եղբայր եկաւ բնակուելու Սինայի վանքի լքուած խոցերից մէկում, ուր գտաւ մի տախտակ՝ որի վրայ գրուած էր. «Մովսէսը՝ Թէոդորոսին: Ներկայ եմ եւ վկայում եմ»: Սա բաւական եղաւ՝ նրա հոգում զղջումն ու արցունքները աւելացնելու համար, այն աստիճան՝ որ մահացաւ առանց կատարել կարողանալու ընդօրինակութեան այն աշխատանքները՝ որ յանձնարարել էին իրեն: Այս եղբոր հարեւաններից մէկը նրանից խնդրել էր իր բացակայութեան շրջանում ուռոգել իր պարտէզը եւ նա ամբողջովին ինքնատիպ ձեւով էր հասկացել այդ աշխատանքը. մտածում էր միմիայն «սրտի պարտէզի մասին, որը ուռոգում էր ու փարթամ պահում»²:

Հագուադէպ են այսօրինակ ապոֆտէգմաները, ուր ոչ միայն երեւում են արցունքները, այլ նաեւ նշմարւում են վշտացածներին խոստացուած մխիթարութիւնները: Միշտ չէ՝ որ արցունքները բխում են գործուած մեղքերի համար զղջումից: Աբբա Դէոսկորոսի աշակերտը հարցնում է. «Ղայր, ինչո՞ւ ես լալիս»: Մերունին պատասխանում է. «Արտասուում եմ մեղքերիս վրայ»: «Դու մեղքեր չունես, հայր», – ասում է մի օր աշակերտը: Իսկ ծերունին պատասխանում է. «Իրականում, որդեակ, եթէ ես դադարեմ մեղքերս տեսնելուց, ուրիշ երեք կամ չորս հոգի բաւական չեն լինի՝ մեղքերս լացելու համար»³: «Երանի՛ նրան, – ասում է ծերերից մէկը, – ով անդադար իր աչքերի առաջ ունի իր յանցանքները»⁴: «Որքան աւելի է մարդ մօտենում Աստծուն, այնքան աւելի է տեսնում մեղաւորի իր վիճակը»⁵: Աբբա Մաթոնէի այս խօսքը թոյլատրում է մեզ մտածել, որ իրենք իրենց մեղաւորներ նկատող Սրբերի արցունքները կարող են բխել ինչպէս մեղաւոր լինելու գիտակցութիւնից՝ այնպէս էլ Աստծոյ հետ մտերմութիւնից, բայց այս նիւթի վերաբերեալ Հայրերը խոսափում են մեր հետաքրքրութեանը գոհացում տալուց: Աբբա Արսէնի ստացած հոգեւոր պարգեւներից կարելի է ենթադրել, որ անդադար արցունքները չէին բխում բացառաբար իր մեղքերից⁶: Աբբա Մարչէլլինոսը ցաւօք չի յայտնում այն հրեղէն տեսիլքի մանրամասները, որը արցունքներ էր հոսեցրել կէսօրուայ ժամերգութեան ընթացքում⁷: Աբբա Սիղուանոսը, որը նոյնպէս հարուստ էր գերբնական պարգեւներով, լալիս էր՝ որովհետեւ տեսիլքում տեսել էր՝ թէ ինչպէս էին բազում վանականներ դժոխք դահավիժում⁸: Աբբա Պիմէնի ամօթխածութիւնն ու խոնարհութիւնը յաղթելու համար՝ հարկաւոր էր ունենալ Աբբա Իսահակի մտերմութիւնը, որը նրանից կորզում է այս հմայիչ խոստովանութիւնը. «Միտքս միացել էր Ամենասրբուհի Աստուածամայր Մարիամին, որն արտասուում էր Փրկչի խաչի ստորոտում: Ես

¹ Պամբո 4.

² Nau 519-520.

³ Դէոսկորոս 2.

⁴ Nau 332.

⁵ Մաթոնէ 2.

⁶ Արսէն 27.

⁷ Nau 567.

⁸ Սիղուանոս 2.

նոյնպէս կ'ուզէի միշտ այդպէս արտասուել»¹: Նոյն ինքը Պիմէնը չէր կարողանում չարտասուել՝ երբ սիրոյ պատճառները մղում էին իրեն ընդունելու ինչ որ մէկի մօտ ճաշելու հրաւերը:

Ինչ էլ որ լինի արցունքների պատճառը, Անապատի Հայրերը քաջ գիտակից էին՝ որ արցունքներն անցողիկ են, որովհետեւ «Աստուած չի ստեղծել մարդուն, որպէսզի վերջինս գղջայ ու տրամի, այլ՝ որպէսզի ուրախ լինի եւ բերկրանքով լի: ... Բայց մեղքի մէջ ընկած մարդը արտասուելու կարիքն ունի»²: «Լա՛ եւ ողբա՛ մինչեւ մահուանդ օրը. յիրաւի, եթէ տխուր ես ու արտասուում ես, չես քայլում տրտմութիւնից դէպի տրտմութիւն, այլ ընթանում ես դէպի բերկրանք»³: Ամմա Սինքլէտիկան արտայայտում է առաւել պատկերաւոր կերպով. ովքեր կամենում են կրակ վառել, պատում են ծխով եւ արտասում են. նմանապէս, արցունքներն անհրաժեշտ են՝ աստուածային կրակի անպատմելի գուարթութիւնը ճանաչելու համար⁴: «Ով չի ճանաչում ուրախութիւնը, չի ճանաչում նաեւ վիշտը»⁵, մի օր բացականում է Աբբա Պիմէնը, որն անկասկած ամենաորակեալ ծերն է՝ վշտացածների ամենամեծ ներկայացուցչի երանութիւնը հռչակելու գործում. «Երանի՛ քեզ, հայր Արսէն, որովհետեւ անձիդ վրայ ողբացիր այս աշխարհում»⁶:

Երանի՛ նրանց՝ ովքեր քաղցած ու ծարախ են արդարութեան

«Երանի՛ ձեզ՝ աղքատներիդ, որովհետեւ ձերն է Աստուծոյ արքայութիւնը: Երանի՛ ձեզ՝ որ այժմ քաղցած էք, որովհետեւ յագենալու էք» (Ղկս 6, 20-21): Ղուկասի Աւետարանում, այս երկու երանութիւններն անմիջապէս յաջորդում են միմեանց եւ քաղցածները, ինչպէս աղքատները, նիւթական թանձրացեալ (կոնկրետ) իմաստով հասկացուած չքաւորներ են, անձեր՝ որ ենթակայ են Ֆիզիքական քաղցին: Երանելի են, որովհետեւ իրենց ներկայ զրկուածութիւնը արժանանալու է մի օր իրական սնունդով յագենալու, բայց նաեւ – եւ սա՛ է Մատթէոսի կողմից ներկայացուած երանութեան իմաստը – որովհետեւ զրկանքները, որոնց պատճառով տառապում են նրանց մարմինները, նրանց մղում են իրենց ամբողջ էութեամբ փափաքելու հոգեւոր այն ճշմարիտ սնունդը, որը մատնանշում է «արդարութիւն» եզրով, եւ որն ուրիշ բան չէ՝ եթէ ոչ Աստուծոյ կամքի անմնացորդ կատարումը: «Իմ կերակուրը կատարելն է կամքը նրա՝ ով առաքել է ինձ» (Յվհ 4, 34):

Ակնյայտ է, որ վանականներն անապատ չէին քաշում հանգստաւէտ կեանք վարելու եւ օրերը զուարճութեամբ անցկացնելու համար: Բայց նոյնքան ակնյայտ է, որ այնտեղ չէին գնում քաղցից սովմաս լինելու աստիճան ծոմապահելու նպատակով: Անապատի Հայրերի համաձայն, ծոմապահութիւնը վանական կեանքի տարրերից մէկն է՝ աղքատութեան, զղջման եւ զուսպ կենցաղավարութեան հետ միասին, բայց որպէս գործիք, որպէս միջոց, եւ ո՛չ երբեք որպէս նպատակ⁷: Վանականը խոնարհեցնում է մարմինը, բայց որպէս միակ նպատակ ունենալով հոգու խոնարհեցումը, այսպիսով շարժելով Աստուծոյ գուրթը⁸: Աբբա Դանիէլի խօսքը.

¹ Պիմէն 144.

² Nau 561.

³ Eth. Coll., 203.

⁴ Սինքլէտիկա 1.

⁵ Eth. Coll., 14, 65.

⁶ Արսէն 41.

⁷ Պիմէն 60.

⁸ Nau 560; Մովսէս 18.

«Որքան ակելի է նուազում մարմինը, այնքան ակելի է փարթամանում հոգին»¹, չպէտք է հասկացուի որպէս բացարձակ սկզբունք, ապա թէ ոչ, տառացիօրէն հասկացուած, կը հասցնէր ինքնասպանութեան. այլ ակելի՝ պէտք է ընկալուի որպէս մի ճշմարտութիւն՝ որ պտուղն է Յովհաննէս Կարճահասակի կողմից առակել յստակ նկարագրուած փորձառութեան. «Եթէ մարդը պայքարում է ծոմապահութեամբ ու քաղցով, թշնամիները անուժ են դառնում հոգու դէմ»²: Պիմէնը նոյնպէս հաստատում է. «Մեզ սովորեցրել են սպանել ո՛չ թէ մարմինը, այլ՝ կրքերը»³: «Երբ Սկիտէի Հայրերը աղ ու հաց էին ուտում, ասում էին. ”Մեր համար բացարձակ կերպով անհրաժեշտ բան չհամարենք աղն ու հացը”։ Եւ այսպիսով, հզօր էին Աստծոյ գործի մէջ»⁴, այսինքն, մէկ անգամ եւս, ընդունակ էին Աստծոյ կամքը, Աստծոյ ամբողջական կամքը կատարելու:

Ճիշտն ասած, Հայրերն ակելի խօսում են փրկութիւնը ստանալու՝ քան աստուածային կամքը կատարելու մասին, բայց քաջ գիտեն՝ որ Աստծոյ կամքը ճիշտ բոլոր մարդկանց փրկութիւնն է⁵: «Մի խօսք ասա ինձ. ի՞նչ պէտք է անեմ փրկուելու համար»: Աբբա Իգիդորոսի խօսքերից մէկն իրենում պարունակում է հնարաւոր բոլոր պատասխանները. «Եթէ ուզում ես փրկուել, արա այն ամէնը՝ որ առաջնորդում է քեզ դէպի այդ նպատակը»⁶: «Ի՞նչ պէտք է անի վանականը: Պէտք է անի այն ամէնը՝ որ բարի է, պէտք է հեռու մնայ այն ամէնից՝ որ չար է»⁷: Ծերերն ասում էին. «Շարունակ բարու մասին մտածէք, որպէսզի գործադրէք այն»⁸: Անապատի բնակիչների սրտում դրոշմուած կատարելութեան այս քաղցն ու ծարաւը բազում ձեւերով է արտայայտուում ապոֆտէզմաներում, բայց միշտ ու միշտ հրաժարուելով կատարելութիւն եւ արդարութիւն եզրերից, որոնք գործածում են միմիայն ասելու համար՝ որ կատարելութիւնը կայանում է խոնարհութեան մէջ եւ որ երբեք չպէտք է վստահենք մեր անձնական արդարութեանը⁹: Շատ հազուադէպ է խօսուում առաքինութիւններ ձեռքբերելու մասին¹⁰, եթէ ոչ միայն՝ յիշեցնելու եւ ընդգծելու համար այն ջանքը՝ որ պահանջուում է առաքինութիւնների գործադրման համար. «Ծերերից մէկն ասում էր. Առանց ճգնութեան, ոչ ոք չի կարող առաքինի լինել, իսկ եթէ նոյնիսկ լինի՝ չի կարող յարատեւ պահել իրեն այդ վիճակում. երկնքի արքայութիւնը խոստացուած է նրանց՝ ովքեր լալիս են եւ քաղցած են»¹¹: Ջանքն ու ճիգը այնքան կարեւոր են վանականի համար, որ կարող են դառնալ նրա սահմանումը. «Ի՞նչ է վանականը: Ջանք»¹²: «Վանական է նա՝ ով ամէն ինչում բռնութիւն է գործադրում իր անձի վրայ»¹³: Իգիդորոսը այս եռանդի գեղեցիկ օրինակներից մէկն էր, մի եռանդ՝ որ ոչ ոք չէր կարող նրանում սառեցնել. «Եղբայրներն աղաչում էին նրան, ասելով. ”Մի քիչ հանգստացիր, որովհետեւ այլեւս տարեց ես”։ Բայց նա պատասխանում էր. ”Կ’ուզէք այրեցէք Իգիդորոսին եւ մոխիրները քամուն նետեցէք, այլեւս ոչ մի

¹ Դանիէլ 4.

² Յովհաննէս Կարճահասակ 3.

³ Պիմէն 184.

⁴ Յովհաննէս Կարճահասակ 29.

⁵ Հմմտ. 1Տմ 2, 4; մէջբերուած՝ Պօղոս Պարզասիրտ; Nau 618 e 641.

⁶ Իգիդորոս Երէց 6.

⁷ Nau 95.

⁸ *Sistematica greca*, XI, 84.

⁹ Անտոն 6; Մաթոէ 7; Սիգոէ 14; Nau 381, 547, 592/27.

¹⁰ Անտոն 35; Յովհաննէս Կարճահասակ 34; Պիմէն 130.

¹¹ *Sistematica greca*, IV, 88.

¹² Յովհաննէս Կարճահասակ 37.

¹³ *Զաքարիա* 1; *Eth. Coll.*, 14, 34; Հմմտ. Nau 102, 504.

չքմեղանք չկայ իմ համար. Աստծոյ Որդին այստեղ է եկել մեր համար»¹: Մէկ ա՛յլ առիթով ասում է. «Եղբայրներ, մի՞թէ այստեղ չենք եկել ջանքի ու յոգնութեան համար: Այժմ, սակայն, այստեղ այլեւս յոգնութիւն չկայ: Այս իսկ պատճառով, արդէն իսկ պատրաստել եմ պատմուճանս եւ գնում եմ փնտուելու մի վայր՝ ուր յոգնութիւն կայ. ահա այնտեղ կը գտնեմ հանգիստս»²: Միեւնոյն բնաւորութեան մի ուրիշ ծեր, որին աշակերտները հրաւիրում էին առաւել չափաւոր լինել ճգնութիւններում, պատասխանում է. «Որդեակներս, ասում եմ ձեզ՝ որ Աբրահամը, երբ տեսաւ Աստծոյ մեծամեծ պարգեւները, զղջաց՝ առաւել պայքարած չլինելու համար»³:

Նմանօրինակ մէջբերումները կարող էին կարծել տալ՝ թէ առաջին վանականների գաղափարն անդադար ու անողոք ճգնութիւնն էր, առաքինի գործերի դիզումը, որոնց արժէքը իբր թէ համազօր էր գործի դրուած ջանքին ու յոգնութեանը: Այսպիսի արդարութիւնն իսկապէս Աստծոյ արքայութեան արդարութիւնն է, որ Տէրը պատուիրում է փնտուել եւ որի քաղցն ու ծարաւն ունեցողներին հուշակում է երանելի: Արդէն ասացինք, որ Հայրերը շատ քիչ են խօսում Աստծոյ կամքի կատարման մասին, բայց միեւնոյն Իզիդորոսն է, որի ճգնութիւններն արժանացել էին գովասանքի, որ յայտարարում է. «Սա՛ է Սրբերի գիտութիւնը. Աստծոյ կամքի ճանաչողութիւնը ... : Բոլոր ոգիներից ամենասարսափելին սեփական սրտին հետեւելն է, այսինքն՝ սեփական մտածումներին եւ ո՛չ թէ Աստծոյ օրէնքին»⁴: Ինչպէս որ կասկածով են մօտենում անձնական դատողութեանն ու սեփական կամքին, այնպէս էլ՝ Հայրերը յանձնարարում են պահպանել Աստծոյ պատուիրանները, բոլո՛ր պատուիրանները, եւ գործադրել դրանք⁵: Աբբա Ագաթոնը, «որ ջանում էր գործադրել բոլոր պատուիրանները», ասում էր. «Առանց մեծ արթնութեան, մարդը չի յառաջադիմում եւ ոչ իսկ մէկ առաքինութեան մէջ», ինչպէս նաեւ «առանց Աստծոյ պատուիրանները պահպանելու»⁶: Սա նշանակում է, որ առաքինի գործերն արժէքաւոր են՝ միմիայն եթէ կամեցուած եւ շնորհուած են Աստծոյ կողմից, ո՛չ թէ տեսական գետնի վրայ, այլ որոշակի անձի, որոշակի պարագաներում, որոշակի կերպով: Այստեղից էլ բխում է այն վիթխարի կարեւորութիւնը, որ Հայրերի աչքերի առաջ ունէր կշռադատութիւնը⁷: Վանականի կեանքը բաղկացած է բազմաթիւ կանոններից, հրահանգումներից ու «առաքինութիւններից»⁸, որովհետեւ դրանք բոլորն էլ յարմար միջոցներ են՝ ստանալու համար այն փրկութիւնը, որին ձգտում է իր ամբողջ հոգիով: Բայց այս միջոցներին բացարձակ արժէք վերագրելը նշանակում է չզանազանել դրանք իրենց նպատակից, եւ քրիստոնէական արդարութիւնը վերադարձնել նիւթապաշտ եւ օրինապահական մի գաղափարախօսութեան, որը դատապարտուած է Տիրոջ կողմից. «Եթէ ձեր արդարութիւնն ակելին չլինի՝ քան դպիրներինն ու փարիսեցիներինն ... »⁹: Թէնդորոս Փերմացին կ'ասէր, որ այդ շփոթումը կը նշանակէր երկրորդականը (մարմնական ջանքը) դնել էականի տեղը, որ է հոգու գործը, որն անուանուում է

¹ Իզիդորոս 5.

² Պիմէն 44.

³ Nau 197.

⁴ Իզիդորոս 9.

⁵ Իսահակ 11; Թէոդորոս 18.

⁶ Ագաթոն 29, 3.

⁷ Nau 93, 106, 222, 225.

⁸ Այն իմաստով՝ որ տուեալ եզրը ունէր այդ դարաշրջանի վանական բառապաշարում: Հմմտ. Conl., 1, 7.

⁹ Մատթ 5, 20; մէջբերուած՝ Եպիփան 15.

նաեւ «Աստծոյ գործ», որովհետեւ այս վերջինն է Աստծոյ իրական պատուիրանը¹: Առաջնութեան այս կանոնով, որ է սէրը, վանականը երբեք չի կարող իրեն գոհ զգալ, ո՛չ էլ մտածել՝ թէ արդէն բաւական բան արել է: Ահա այս քաղցն ու ծարաւն էին, որ մահուան չափ չարչարում էին Անապատի Հայրերի մէջ ամենասրբերին, եւ որ նրանց մղում էին ամենայն համոզմամբ հաստատելու՝ թէ եւ ոչ իսկ սկսել էին գործը:

Երանի՛ ողորմածներին

«Ողորմած” վարքը, որ յանձնարարւում է հինգերորդ երանութեամբ, ամբողջովին յատուկ կերպով վերաբերւում է մերձաւորին տրուած ներողութեանը՝ նրա կողմից թոյլատրուած սխալների համար ... : Բայց ողորմած վարք ցուցաբերելու պարտականութիւնն ունի առաւել ընդարձակ տարածում, որն համապատասխանում է մարդասիրութեան բոլոր գործերին ... : Ողորմածութեան գործնական կիրառումը յատկապէս բոլոր նրանց հանդէպ է՝ ովքեր գտնւում են չքաւորութեան մէջ եւ կարիքն ունեն ուրիշների օգնութեան»²:

Ընդգծուած այս երկու դիմագծերով, ողորմածութիւնը շարունակ ներկայ է Անապատի Հայրերի կեանքում ու խօսքերում, այն աստիճան՝ որ մէջբերումների պարզ ցանկն անգամ բաւական կը լինէր եւս մէկ անգամ ցոյց տալու՝ թէ որքան մտահոգ էին ապրելու Աւետարանն ամբողջութեամբ, տառ առ տառ: Մարդկանցից խոսափելով եւ արմատական աղքատութեան մէջ ապրելով հանդերձ, Հայրերը հաւասարապէս գտնում էին անթիւ առիթներ՝ մերձաւորին օգնութեան հասնելու համար: Հայրերի խօսքերում, Մատթէոսի այս հատուածը (5, 7) մէջբերուած է միայն մէկ անգամ, արքայական մի պաշտօնեայի վերաբերեալ, որն իր շապիկով ծածկել էր ճանապարհի երկայնքին ընկած մի դիակ³: Բայց վանականներից ոմանք – ինչպէս Աբբա Նիսիւթերոնը, Սրապիոնը եւ Դէոսկորոսը – շատ աւելին էին արել⁴: Զանազան պատմութիւններ նաեւ յայտնում են՝ թէ ինչպիսի բախումներ էին առաջանում նրանց մէջ, կապուած՝ սիրոյ – ասենք՝ ողորմածութեան գործադրման – եւ վանական խոնարհութեան ու խստակեցութեան, յատկապէս ծոմապահութեան հակասական պահանջներին: Պատմութիւններ են, որ տեղադրուել են համակարգուած ժողովածոյի տասներեքերորդ գլխում, որի վերնագիրն է. «Հիւրասիրութիւնն ու ողորմածութիւնը ուրախութեամբ գործադրելու մասին»: Այդ պատմութիւններից մէկը յիշում է՝ թէ ինչպիսի գայթակղութիւն էր առաջացրել Աբբա Մովսէսը, որ համարձակուել էր հիւրերի համար ինչ որ մի բան եփել, մինչ վանքում տիրում էին խիստ ծոմապահութեան կանոնական օրերը, բայց որին վերջում գովաբանում են, որովհետեւ «խախտել էր մարդկանց կողմից դրուած կանոնը՝ պահպանելու համար Աստծոյ պատուիրանը»⁵: Այդ դարաշրջանի վանական բառապաշարում, «պատուիրան» ասելիս հասկանում էին սիրոյ պատուիրանը եւ յունարէն «entole» եզրը դարձել էր «agape»ի հոմանիշը⁶, ինչը որ ցոյց է տալիս այն բացարձակ կարեւորութիւնը՝ որ եղբայրական սէրը վայելում էր Անապատի Հայրերի մօտ:

¹ Թէոդորոս 10-11; Յովհաննէս Ներքինի 1.

² J. Dupont, *Le beatitudini*, vol. II, pp. 993-994.

³ *Nau* 38.

⁴ *Նիսիւթերոն* 4; *Nau* 566.

⁵ *Մովսէս* 5.

⁶ *Ղովտ* 1; *Nau* 288. Հմմտ. D. Tabachovitz, *Etudes sur le grec de la basse époque*, Uppsala 1943, pp. 63-36.

Այս հարցի վերաբերեալ նոյնպէս, առաջին վանականները հնարաւոր ամենախոր կերպով էին ըմբռնել ու ապրել Աւետարանը, այն ոգով՝ որ յատուկ է նրան: Յստակ կերպով հասկացել էին, որ Տէրը չի պահանջում արտաքին վարուելակերպեր ու արարքներ, այլ աւելի պահանջում է՝ որ ներքուստ կերպարանակից լինենք իր իսկ սրտի զգացումներին, որը գերառատօրէն լի է մարդկանց նկատմամբ սիրով եւ ֆիզիքական ու բարոյական թշուառութիւնների նկատմամբ կարեկցանքով: Գիտակից լինելով մեղաւորներ լինելու իրենց որակին, հակուած լինելով իրենք իրենց անարգելու ու դատապարտելու եւ, հետեւաբար, համոզուած՝ թէ անդադար կարիքն ունէին աստուածային ողորմութեան, Հայրերն իրենց մղուած էին զգուժ նախեւառաջ իրենք գործադրելու ողորմածութիւնը, իրենց մտածումներում եւ իրենց սրտից ներս: Երբեմն առիթն էին ունենում նաեւ ներելու ստացուած վիրաւորանքները, իրենց հերթին ստանալու համար աստուածային ներումը, աւետարանական ուսուցման հիմնական սկզբունքներից մէկի համաձայն, որն Իզիդորոսը չէր յոգնում յիշեցնել Սկիտէի վանականներին¹ եւ որը մեկնաբանում է երկու կարեւոր ապոֆտէգմաններում²: Բայց այս խոնարհ անձանց համար, որոնք իրենց միմիայն արհամարհանքի էին արժանի համարում, ի՞նչ կարող էին իրենցից ներկայացնել իրենց թշուառ անձին հասցուած վիրաւորանքները՝ համեմատութեամբ այն միւսների, որ վերաբերում էին Աստծուն: Յատկապէս եղբայրների մեղքերի առաջ է, որ Հայրերը լիովին դրսեւորում էին այն ողորմածութիւնը, որով դրոշմուած էր իրենց սիրտը: Քանի դեռ չէին զգուժ միջամտելու մի անզանցառնելի պարտականութիւն, խուսափում էին դատելուց ու դատապարտելուց, չուզելով Տիրոջ աւելի խիստ երեւալ³. Իսկ եթէ նրանցից մէկին պատահում էր անուշադրութեամբ սեփականացնել դատելու Աստծուն միայն յատուկ իրաւունքը, պատժում էր մի այնպիսի խստութեամբ՝ որ բաւական էր լինում նրան մէկընդմիջտ բշչելու համար⁴: Գիտէին, որ «դատելուց աւելի վատթար բան չկայ»⁵. այս իսկ պատճառով, խուսափում էին դատելուց նաեւ կանոնական ժողովների ժամանակ⁶, ինչպէս նաեւ երբ խօսքը վերաբերում էր ակնյայտ ոճրագործութեան⁷: Վանքից դուրս վտարուած որեւէ մի վանական քաջ գիտէր, որ միշտ կարող էր յուսալ Անտոնի, Պափնոտիոսի, Պիմէնի նման Հայրերի ներողամտութեանը⁸: Սկիտէից վտարուած եղբայրներից մէկն ընդունւում է ծերունիներից մէկի կողմից, որին սկսում են մեղադրել չափազանց ներողամիտ լինելու մէջ. «Եթէ Տէրը նրա վերաբերեալ հարցնի քեզ, ի՞նչ ես պատասխանելու»: "Կ'ասեմ նրան. Մեղաւորին իմ մօտ առայ Քո համար, որովհետեւ գիտեմ՝ որ Դու ողորմած ես ... »⁹:

Բայց ուրիշների յանցանքները չտեսնելուց կամ «չտեսնելու պէս տեսնելուց»¹⁰ դե՛ռ աւելի աւետարանական մի դիրքորոշում կայ. դա մերձաւորի յանցանքները սեփական անձի վրայ վերցնելն է, ինչպէս ասում է ծերերից մէկը. «Եթէ ինչ որ մէկին տեսնում ես մեղանչելիս, աղօթիր Տիրոջը ասելով. Ներիր ինձ, որովհետեւ մեղանչեցի: Այսպիսով կ'իրականանայ քեզնում խօսքը. Չկայ աւելի

¹ Իզիդորոս 10; Հմմտ. Nau 226, 304; Eth. Coll., 13, 60.

² Սիզոն 1; Nau 557.

³ Յովհաննէս Պարսիկ 1; Պիմէն 113; Պափնոտիոս 1.

⁴ Իսահակ Թէրէցի 1; Nau 254, 477.

⁵ Nau 97.

⁶ Մովսէս 2; Պիր 3.

⁷ Ամոն 10.

⁸ Անտոն 21, 29; Պիմէն 6, 70.

⁹ Eth. Coll., 13, 14.

¹⁰ Մակար 32.

մեծ սէր ունեցող մէկը ... ¹»: Վանականներից ոմանք, եղբայրների մեղքերը աղօթքի ժամանակ Աստծոյ առջեւ իրենց վրայ առնելով անգամ չէին գոհանում, թէեւ խօսքը չէր վերաբերում փոքրիկ թերացումներին. «Երկու եղբայր գնացին շուկայ՝ վաճառելու համար իրենց գործերը, եւ երբ մէկը միւսից բաժանուեց, ընկաւ պոռնկութեան մէջ: ... Միւսը, կամենալով շահել նրան, սկսեց ասել. "Նոյնը պատահեց նաեւ ինձ. ... բայց այժմ գնանք, ապաշխարենք մեր բոլոր ուժով եւ Աստուած կը ների մեզ": ... Եւ ինքը նոյնպէս սկսեց ապաշխարել միւսի համար, թէեւ ինքը չէր մեղանչել: Աստուած, տեսնելով նրա սիրոյ ջանքը, քիչ օրեր անց յայտնեց ծերունիներից մէկին, որ չմեղանչած եղբօր սիրոյ պատճառով թողութիւն էր տուել մեղաւորին: Ահա, սա՛ է նշանակում եղբայրների համար նուիրել սեփական հոգին»²: Գիտենք նաեւ «եղբայրական հոգատարութեամբ ու սիրով լի»³ մի ուրիշ վանականի մասին, որը սովոր էր ինքն իրեն մեղադրել այն բոլոր թերութիւնների մէջ, որոնք իրական յանցաւորները չէին կամենում խոստովանել: Անշուշտ շատ ձեւեր կան՝ ուրիշների թշուառութիւնները կրելու համար: Աբբա Ագաթոնը պատրաստ էր իր մարմինը փոխել բորոտի մարմնի հետ, եթէ հնարաւոր լինէր⁴: Դե՛ռ աւելի հերոսական կը լինէր սեփական մարմինն ու հոգին փոխանակել ոճրագործի հետ: Պիմէնը խորհուրդ էր տալիս աւելի լաւ վարուել մեղաւորի՝ քան արդարների հետ⁵: Նմանապէս Քրիոնը, աւելի սէր էր սնուցում ու ցուցաբերում մի մեղաւոր եղբօր նկատմամբ, քան թէ միւսի՝ որն անստգտանելի էր⁶: Հոգու այս դիրքորոշումներից է, որ կարող ենք ճանաչել իրական աշակերտները՝ նրա՛ որ եկել է ո՛չ թէ արդարներին, այլ մեղաւորներին կանչելու: «Չէ՞ք տեսնում Տիրոջ ողորմութիւնը, որ ունեն ծերերը Տիրոջ նմանութեամբ»⁷: Աբբա Պամբոն ասում էր թէ՛ ողորոսին. «Գնա՛, ողորմած եղիր բոլորի նկատմամբ, որովհետեւ ողորմութիւնն ազատ մուտք ունի Աստծոյ առաջ»⁸, ազատ մուտք այստեղ երկրի վրայ՝ որպէսզի ընդունելի լինեն մեր աղօթքները, եւ ազատ մուտք անդենական աշխարհում՝ որպէսզի վստահասիրտ ներկայանանք գերագոյն Դատաւորին: Այսպիսին էր պարագան այն եղբօր, որը ճգնութիւնների մէջ նուազ եռանդով ապրած լինելով հանդերձ՝ մահուանն ընդառաջ էր գնում ուրախ ու հանդարտ. «Այն օրից ի վեր՝ ինչ վանական եմ դարձել, որքան որ գիտեմ՝ չեմ դատել ոչ ոքի ու ոխ չեմ պահել ոչ ոքի հանդէպ: ... Ուզում եմ ասել Աստծուն. Տէր, Դու ասացիր. "Մի՛ դատէք եւ չէք դատուի, ներէք եւ կը ներուէք"»⁹:

Երանի՛ արտով մաքուրներին

Մաքրութիւնը, որի մասին խօսւում է այստեղ, հոգեւոր աղքատութեան նման՝ ներքին խոր դիրքորոշում է, հոգու մի վիճակ, դիտաւորութիւնների կատարեալ ուղղամտութիւն, ներքին հոգեւոր հայեացքի պարզութիւն, որն որոշ կերպով նախապէս տրամադրում եւ պատրաստում է Աստծոյ տեսութեանը: Սրտի այս մաքրութիւնն էր Սկիտէի վանականների գաղափարականը, ինչպէս որ Քասսիանոսը ասել է տալիս նրանցից մէկին, Աբբա Մովսէսին, երբ մէջբերում է

¹ Eth. Coll., 13, 40.

² Nau 179.

³ Nau 452.

⁴ Ագաթոն 26.

⁵ Պիմէն 70.

⁶ Eth. Coll., 13, 41.

⁷ Eth. Coll., 13, 41.

⁸ Պամբո 14.

⁹ Nau 530.

վեցերորդ երանութիւնը¹: Առաջին հայեացքից, սա ապոֆտէգմաներում այնքան էլ ահնյայտ չէ, այն աստիճան՝ որ Հայրերի խօսքերում երբեք մէջբերուած չէ սրտով մաքուրների երանութիւնը: Գիտենք, որ Եգիպտոսի անապատներում ապրելու քաշուողները փնտռում էին փրկութիւնը, բայց արդեօք ձգտո՞ւմ էին հասնելու ներքին մաքրութեանն այնպէս՝ ինչպէս կիրառում էին նորաղատոնական ճգնաւորները, այսինքն՝ Աստուծոյ տեսութեանը այս կեանքում իսկ հասնելու հեռանկարով:

Ուշագրաւ ապոֆտէգմաներից մէկը գեղեցիկ կերպով ընդգծում է հելլենական միսթիկայի եւ քրիստոնէութեան էութեան միջեւ եղած հակասութիւնը: Մի հեթանոս քուրմ, Սկիտէից անցնելիս, հիւրընկալուում է Աբբա Օլիմպիոսի կողմից: Տեսնելով վանականների խիստ կենցաղն ու մեծամեծ ճգնութիւնները, հեթանոս քուրմը զարմանում է՝ թէ ինչպէս այդ բոլոր գործերն իբրեւ հետեւանք չունեն Աստուծոյ տեսութիւնը ներկայ կեանքում. «Անկասկած, եթէ տեսիլքներ չէք տեսնում, հետեւաբար՝ ձեր սրտերում սնուցում էք չար մտածումներ, որոնք անջատում են ձեզ ձեր Աստուծոց: Այս պատճառով է, որ նա չի յայտնում ձեզ իր խորհուրդները»: Այս նկատողութիւնը մեծ զարմանք պատճառեց ծերերին, որովհետեւ իրօք՝ «անմաքուր մտքերը բաժանում են Աստուծուն մարդկանցից»²: Ամէնօրեայ կեանքից քաղուած այս միջադէպը ցոյց է տալիս, որ Անապատի Հայրերը տեսիլքներ ու յայտնութիւններ չէին սպասում, բայց ամբողջ սրտով մերժում էին անմաքուր մտքերը, որոնք կարող էին իրենց բաժանել Աստուծոց: Աստուծոց բաժանուելը նրանց համար ամենավատթար իրականութիւնն էր, ինչպէս յստակ կերպով երեւում է Աբբա Ագաթոնի հակազդեցութիւնից. երբ իրեն մեղադրում են պոռնիկութեան եւ հպարտութեան, շատախօսութեան եւ չարախօսութեան մէջ, ընդունում է մեղադրանքները, բայց երբ մեղադրում են հերետիկոսութեան մէջ՝ վճռականօրէն մերժում է. «Հերետիկոսութիւնը՝ Աստուծոց բաժանուած լինելու վիճակն է, իսկ ես չեմ ուզում Աստուծոց բաժանուած լինել»³: «Ինչ նեղութեամբ էլ եղբայրդ չարչարի քեզ, եթէ բարկանում ես՝ ունայն է բարկութիւնդ: Բայց եթէ ցանկանում է բաժանել քեզ Աստուծոց, բարկացիր»⁴: Իրականում, նման դէպքի հնարաւորութիւնը ծայրաստիճան անհաւանական էր անապատում, ուր վանականը քաշուել էր ճիշտ հեռանալու նպատակով այն բոլոր անձերից եւ այն բոլոր առարկաներից՝ որոնք կարող էին իր համար մեղքի առիթ լինել: «Ազատուելով երեք պատերազմներից, այսինքն՝ լսելուց, խօսելուց եւ տեսնելուց, (վանականին) մնում է միայն մէկ պատերազմ. սիրտը»⁵, այսինքն՝ պայքարը չար մտածումների դէմ, որոնց կենտրոնն ու աղբիւրն է սիրտը, Մատթէոս 15, 19 հատուածի համաձայն: «Աղաչում եմ ձեզ, եղբայրներ. հեռացել ենք (չար) գործերից, հեռանանք նաեւ ցանկութիւններից»⁶:

Ինչպէս էլ որ անուանուեն – չար, ամբարիշտ, անմաքուր – մտքերը, որոնց դէմ վանականը պայքարում է, կարող են լինել ողջախոհութեան դէմ մտքերը⁷, բայց ո՛չ միշտ եւ ո՛չ էլ յաճախ, ինչպէս հետեւում է ապոֆտէգմաների ամբողջական քննութիւնից: Ընդհանուր կերպով, խօսքը վերաբերւում է որեւէ մտքի՝ որ բարի չէ⁸, այլ «օտար» է կամ «թշնամի»⁹, որովհետեւ գալիս է ոչ թէ

¹ Conl., 1, 10.

² Օլիմպիոս 1; Հմմտ. A. J. Festugière, *L'enfant d'Agrigente*, Paris 1941, p. 121.

³ Ագաթոն 5.

⁴ Պիմէն 118.

⁵ Անտոն 11.

⁶ Nau 83.

⁷ Հերոնա; Nau 184, 185.

⁸ PE IV, 15, 3.

⁹ Nau 665.

Աստծուց, այլ սատանայից: Բոլոր այն մտածումներն են, որ մեզնում գտնում են կրքերից որեւէ մէկի գործակցութիւնը, մեղսակցութիւնը, եւ որ միշտ ձգտում են քաշելու մեզ դէպի մեղքը: Ապոֆտէզմաները երբեք չեն ակնարկում այն մտածումներին, որոնք Եւագրիոսի կողմից անուանում են «պարզ մտածումներ», այսինքն այն մտածումները՝ որոնք իրենքըստինքեանց չար չեն, բայց ի զօրու են խոչընդոտելու աղօթքի կատարեալ մաքրութիւնը¹: Ուրիշ խօսքերով, Անապատի Հայրերի կողմից փնտռուած սրտի մաքրութիւնը երբեք «մտային մաքրութիւնը» չէ, այն «մտքի մերկութիւնը՝ որի մասին խօսում է իմաստասէր վանականը»², այլ՝ հնարաւորին չափ կատարեալ բարոյական մաքրութիւնը, ըստ իւրաքանչիւրի ջանքի ու կարողութեան³, աստուածային շնորհի օգնութեամբ:

Գիտենք՝ թէ ինչպիսի կարեւոր դեր է խաղում ապոֆտէզմաներում «պայքարը մտածումների դէմ»⁴, բայց այս փաստից մեկնելով՝ այն չպէտք է չափազանց անհրաժեշտ նկատենք վանականի կեանքում: Իրականում, ինքնին կերպը՝ որով Հայրերը խօսում են իրենց պայքարների մասին, թոյլատրում է նկատել՝ որ այդ պայքարները չեն լցրել նրանց ամբողջ կեանքը, ո՛չ էլ եղել են նրանց հոգեւոր գործունէութեան հական մասը: Երբ Սրբերից մէկը հաստատում է՝ թէ տասը տարի պայքարել է՝ որպէսզի օտար ոչ մի միտք մուտք գործէր իր սրտից ներս, մենք իսկոյն հասկանում ենք՝ որ տասը տարիների պայքարով հասել է մի հրաշալի մաքրութեան: Նմանատիպ ուրիշ ապոֆտէզմաներ յայտնում են յատկապէս խղճի փափկանկատութիւնը, որին հասել էին Սիղուանոսը, Ագաթոնը, Նիսիւթերոնը եւ ուրիշ շատեր⁵, շնորհիւ այն հոգատարութեան՝ որով հսկում էին իրենց անձերի վրայ եւ գործադրում էին «սրտի պահպանութիւնը»⁶:

Հնագոյն ժողովածոներից մեծ մասում պահպանուած մի ապոֆտէզմայի համաձայն, որոշ իմաստասէրներ, վանականներից մէկի համբերութեանն ու խոնարհութեանն ի տես հիացած, հարցնում են. «Անապատում մեզնից աւելի ի՞նչ էք անում»: Ծերը պատասխանում է. «Յուսալով Աստծոյ շնորհին, պահպանում ենք մեր հոգին»⁷: Ապոֆտէզմաներից շատերն իրօք ցոյց են տալիս, որ եթէ Անապատի Հայրերը պայքարում էին մտածումների դէմ, ամէնից աւելի՝ իրենց յոյսը Աստծոյ վրայ էին դնում՝ սրտի մաքրութեանը հասնելու համար: «Եղբայրներից մէկը հայր Պիմէնին հարցրեց անմաքուր մտքերի մասին, եւ նա պատասխանեց. ”Մեծ է Աստծոյ օգնութիւնը, որ հասնում է մարդուն ... ”»⁸: «Եթէ մարդը յարատեւում է իր զուսպ կենցաղում, Տէրը նրան կը պարգեւի երկիւղը եւ սրտի մաքրութիւնը, եւ մարդը լի կը լինի Տիրոջ հրաշալիքներով»⁹: Թւում է՝ թէ ձերբերից ոմանց համար բաւական էր իրենցից հեռացնել արտաքին «առեւտուրը», չար գործերը, եւ «ուղղել մարմնի հակումները», որպէսզի սիրտը դառնար մաքուր¹⁰. Իրօք, «եթէ տան Տէրը մտնում է, օտարները փախչում են դուրս»¹¹: Աբբա Յովհաննէս Քէլիացու համաձայն, բաւական է պարզապէս ուղեւ բժշկուել, ինչպէս Երուսաղէմի աւագանի մօտ պառկած անդամալոյծը. եթէ մարդը կամենում է, Յիսուս նրան լսում է,

¹ I. Hausherr, *Les leçons d'un contemplatif*, pp. 80-82.

² I. Hausherr, *Noms du Christ et voies d'Oraison*, Roma 1960, p. 151.

³ *Nau* 216.

⁴ *Eth. Coll.*, 13, 67.

⁵ *Սիղուանոս* 6; *Eth. Coll.*, 13, 25; 13, 93.

⁶ *Ագաթոն* 8; *Հերոնա*; *Նիսիւթերոն* 2.

⁷ *Nau* 342.

⁸ *Sistematica greca*, V, 10.

⁹ *Eth. Coll.*, 14, 12.

¹⁰ *Eth. Coll.*, 13, 90-91; 14, 5.

¹¹ *Eth. Coll.*, 13, 77.

փրկում է նրան եւ նրանից հեռացնում է չար մտածումները¹, ինչպէս Ղազարոսը գերեզմանից դուրս ելաւ Տիրոջ հրամանով. «Եթէ լսենք Յիսուսին, Նա կ'արձակի մեզ այս բոլոր կապանքներից եւ կ'ազատի մեզ այս բոլոր չար մտածումների ստրկութիւնից»²: «Օրհնեալ է Տէրը, որ յաղթեց եւ իրեն վերցրեց իմ սիրտը»³:

Եթէ յաճախ է խօսուում մաքրագործման մասին, Հայրերն այնուամենայնիւ աւելի սակաւախօս են՝ երբ խօսքը վերաբերուում է այդ մաքրագործման արդիւնքներին կամ կերպին՝ որով իրագործուում է մաքրութիւնը: Պատճառը շատ պարզ է. «Ահա այն՝ ինչ Տէրը սիրում է. այն ամէնը՝ որ մարդը կատարում է ծածուկ: Մի՞թէ սա չէ այն՝ որ մաքուր է»⁴, այսինքն «գործերը՝ որոնց խառնուած չէ մարդկային ոչինչ»⁵: Երբ Ամմա Սառան աղօթում է, որ իր սիրտը «մաքուր լինի բոլորի հետ», սա նշանակում է ազատուած լինել մարդկանց հաճելի լինելու որեւէ ցանկութիւնից⁶, որը պայմանն է՝ Աստուծոյ հաճելի լինելու համար⁷: Ծերունիներից մէկն էլ իր հերթին աղօթել էր «քսան տարի ... բոլոր մարդկանց իբրեւ մէկ մարդ տեսնելու համար»⁸, որովհետեւ «նա՝ ով խտրութիւն է կատարում, կատարեալ չէ»⁹: Սիրոյ կատարելութեան կերպարանքներից մէկն է, որ մատնանշուում է «մարդկանց համար մեռած լինել» արտայայտութեամբ. խօսքը չի վերաբերում մերձաւորների նկատմամբ անտարբեր լինելուն, այլ՝ ցանկութիւնների համար մեռած լինելուն, այսպիսով արմատականօրէն անընդունակ դառնալով ուրիշների մէջ «չար»ը տեսնելուն - ով էլ որ լինի այդ ուրիշը - նկատելու համար միայն «այն գեղեցիկ յարաբերութիւնները, որ գոյութիւն ունեն իր եւ եղբօր միջեւ»¹⁰: Այսպիսի մի խօսք «կարող էր իրեն որպէս հեղինակ ունենալ միմիայն Աբբա Պիմէնին»¹¹, որը մի ա՛յլ տեղ կրկնում է միեւնոյն ճշմարտութիւնը ուրիշ խօսքերով. «Եթէ մարդ հասնում է Առաքեալի խօսքին. "Ամէն բան մաքուր է մաքուրների համար" (Տիտ 1, 15), բոլոր արարածների մէջ իրեն կը համարի ամենավատթարը»¹²: Ահա թէ այս աշխարհում ինչի էր հասնում Անապատի մեծ Հայրերի սրտի մաքրութիւնը. ո՛չ երկնային տեսիլքների - որոնք Հայրերը չէին փնտռում, ո՛չ էլ փափաքում - այլ տեսութեանը սեփական ոչնչութեան, լոյսի ներքոյ Նրա՝ որ «միակ Մաքուրն է»¹³. «Նրանց սիրտն, իրօք, միասնական եւ պարզ է, քանի որ հայում է միմիայն Աստուծուն»¹⁴:

Երանի՛ խաղաղարարներին

«Eirenopoioi»ները պարզ խաղաղասէրները չեն (eirenikoi), այսինքն՝ խաղաղութիւնը սիրող անձինք, այլ՝ խաղաղութիւն հաստատող անձինք: Կարելի էր թարգմանել. երանի՛ հաշտարարներին. իրօք, տեղը՝ ուր խաղաղութիւն

¹ Eth. Coll., 14, 41.

² Eth. Coll., 14, 42.

³ Eth. Coll., 14, 54.

⁴ Eth. Coll., 13, 7.

⁵ Յովսէփ Թէբէացի.

⁶ Սառա 5.

⁷ Eth. Coll., 13, 40.

⁸ Nau 105.

⁹ Paradise, II, 448.

¹⁰ Eth. Coll., 13, 45.

¹¹ Eth. Coll., 13, 48-49.

¹² Պիմէն 97.

¹³ Զենոն 4.

¹⁴ Nau 362.

Հաստատելու կարիքը կայ, այնտեղ է՝ ուր տիրում են երկպառակութիւնները, ուր գոյութիւն ունեն թշնամութիւններ ու անհամաձայնութիւններ: Երանի՛ նրանց՝ ովքեր միայն իրենք իրենց մէջ եւ միայն իրենք իրենց համար խաղաղութիւն ունենալուց դժգոհ, աշխատում են իրենց շուրջիներէ համար նոյնպէս հայթայթել իրենց կողմից վայելուած այս բարիքը:

Ապոֆտէզմաներից մէկը թւում է՝ թէ հաստատում է՝ որ այս երանութիւնը ոչնչով յարմար չէ վանականներին: Որպէս փաստ, ապոֆտէզման պատմում է մի միայնակեացի մասին, որն իր ամբողջ կեանքը տրամադրել էր՝ այս երանութիւնը տառ առ տառ գործադրելու. իր միակ մտահոգութիւնը հաշտեցնելն էր նրանց՝ ովքեր գժտուած էին: Նուիրւում է այդ գործին ամբողջ եռանդով, բայց քանի որ միշտ չէ՝ որ հասնում է դրական արդիւնքների, յուսախաբ է մնում ու տրտում: Յայնժամ գնում է գտնելու իր հին ընկերներից մէկին, որն ընտրել էր վանական մենակեցութիւնը եւ ուրախանում էր՝ լաւագոյն մասն ունենալով: Մարդկանց մէջ բնակուողն, յիրաւի – բացատրում է վերջինը – չի կարող տեսնել իր յանցանքները, որովհետեւ միտքը զբաղուած է ուրիշների յանցանքներով, մինչդեռ ով միայնակ է անապատում՝ տեսնում է իր մեղքերը¹:

Այս ապոֆտէզման արդեօք չի՞ հաստատում այն՝ ինչը որ բազում անգամներ արդէն ասացինք վանականի կենցաղավարութեան մասին, այսինքն՝ որ վանականը, թաքնուելու եւ խոնարհութեան փափաքով, աւելի տրամադիր պէտք է լինի զբաղուելու ի՛ր հոգու վիճակով՝ քան միջամտելու ուրիշների գործերից ներս: Լաւագոյն օրինակը Պիմէնինն է, որ երկու եղբայրներին թողնում է՝ որ վայրագօրէն ծեծեն միմեանց, առանց միջամտելու, այն աստիճան՝ որ արթնացնում է Աբբա Անուբի գայրոյթը²: Այս միջադէպի վերաբերեալ, սակայն, հարկ է ասել՝ որ Պիմէնն այդ օրերին տակաւին երիտասարդ էր եւ ամբողջովին նուիրուած էր սովորելու ինքնամերժումն ու անջատումը, ինչպէս նաեւ թերեւս մտածում էր՝ որ այդ բռնցքահարումը երեսայական խաղ էր եւ շատ չանցած կրկին հաշտուելու էին:

Շատ աւելի լուրջ տարածայնութիւններ էլ էին ծագում անապատում, ինչպէս ուրիշ որեւիցէ մի տեղ: Աթանասը Անտոնի վերաբերեալ վկայում է՝ թէ «Աստուծոց ստացել էր միմեանց միջեւ վէճ ունեցողներին հաշտեցնելու պարգեւը»³, որոնք անշուշտ աշխարհականներ էին, բայց նաեւ վանականներ, թէեւ ապոֆտէզմաների ամբողջութիւնը ներկայացնում է վանական միջավայրերի բաւական խաղաղ մի պատկեր: Գտնում ենք անձինք, որոնք անշուշտ զուրկ չէին զգացումներից, բայց միմեանց միջեւ մրցում էին համբերութեան, հեզութեան ու խոնարհութեան ասպարէզում, պահպանելու կամ երբեմն նաեւ վերահաստատելու համար խաղաղութիւնը⁴: Ծերերից ոմանք յանձնարարութիւններ են տալիս այս հարցի վերաբերեալ⁵, որոնք պարապ տեղն արտասանուած խօսքեր չէին նրանց համար՝ ովքեր ապրում էին երկու երկու եւ գործնականում միշտ միասին էին, լինէին դրանք երկու եղբայրներ, թէ մի ծեր ու իր աշակերտը: Շատ դիւրին է երեւակայելը՝ թէ եղբայրական ինչպիսի գեղեցիկ մթնոլորտ կարող էր ստեղծուել նրանց միջեւ, բայց նաեւ՝ թէ ինչպիսի յարատեւ փոխադարձ ինքնամերժման էին ենթակայ⁶: Եղբօրը, որն իրենից հարցնում էր. «Ինչպէ՞ս մարդ կարող է խաղաղութեամբ ապրել իր հետ բնակուող եղբօր հետ», Պիմէնը պատասխանում է. «Եթէ մարդը համբերում է իր ընկերութեանը, կարող է ապրել նաեւ գազանների հետ»⁷: Երկու

¹ Nau 134.

² Պիմէն 173.

³ Vita Ant., 14.

⁴ Պօղոս 1; Nau 495; PE III, 39, 2, 5-6.

⁵ Nau 232; Eth. Coll., 14, 3.

⁶ I. Hausherr, *Direction spirituelle en Orient autrefois*, Roma 1955, p. 163.

⁷ Eth. Coll., 14, 2.

ծեր այնքա՛ն համերաշխ էին ապրում իրար հետ, որ լիակատար կերպով անընդունակ էին դարձել վիճաբանելու¹: Հասկանալի է, որ սատանան, տեսնելով այս աստիճան խաղաղասէր մարդիկ, միջամտե՛ր՝ իր որոմը ցանկելու համար², բայց խոնարհութիւնը միշտ յաղթում էր, բազում համբերութեամբ եւ, երբ պարագաները պահանջում էին, նաեւ մի քիչ դիւանագիտութեամբ³:

Եթէ խաղաղութիւնը սովորաբար տիրում էր անապատի վանքերում, պատճառն այն է՝ որ ամէն ոք փնտռում էր այն, իւրաքանչիւրը նախ ինքն իր համար, գործի դնելով ամենայարմար միջոցները. «Փախուստով՝ սիրտը ստանում է խաղաղութիւնը, իսկ հնազանդութեամբ՝ մարդը ստանում է երկնային Երուսաղէմը, այն՝ որ ազատ է»⁴: Խաղաղարարների երանութիւնը մեկնաբանելով, Աբբա Նիսիթերոնը ասում էր. «Թող որ մարդ միշտ խաղաղուած լինի ներքուստ, Սուրբ Հոգու հետ, ամէն ինչում»⁵: Ծիշտ սա՛ է վանական խաղաղութեան աղբիւրը. ներքին հոգեւոր հնազանդութիւնը Սուրբ Հոգուն: Երդ դարում, Անապատի Հայրերի հաւատարիմ աշակերտներից մէկը, Յովհաննէս Գազացին, մեծն Բարսանուֆի ընկերը, նմանատիպ կերպով է մեկնաբանում եօթներորդ երանութիւնը, թէեւ դիմում է աշխարհական հաւատացեալի. «Խաղաղութիւն հաստատիւր սրտիցդ ներս, որպէսզի կոչուես Աստծոյ որդի»⁶: Մէկ ուրիշին, որն իրենից հարցրել էր. «Քանի որ գրուած է. ”Երանի՛ խաղաղարարներին”, աւելի լաւ չէ՞՞ ամբողջ եռանդով բոլորի խաղաղութեանը նուիրուելը», պատասխանում է. «Աւելի լաւ է սեփական սրտից ներս խաղաղութիւն հաստատելը: Սա վերաբերում է բոլորին եւ երանելի է նա՛՝ ով այն գործադրում է: Մինչդեռ պատերազմողներին խաղաղութեան հրաւիրելը բոլորի գործը չէ, այլ միայն նրանց՝ ովքեր կարող են անվնաս դուրս գալ վերջում: Իսկ նա՛ որ տկար է, պէտք է երջանիկ լինի բոլորի խաղաղութեան համար, բայց չպէտք է առաջարկի իր միջամտութիւնը՝ իւրաքանչիւրի խաղաղութեան համար, բացի նրանցից՝ որոնց սիրում է Աստծոյ համաձայն. բայց այս վերջինը նոյնպէս՝ եթէ չի վնասում իր իսկ հոգուն»⁷: Անապատի Հայրերի եւ Գազայի ծերերի միեւնոյն գծի վրայ, Թէոդորոսը սահմանում է վանականին. «Նա է՝ որ զբաղւում է միմիայն Աստծով, որ ձգտում է հասնելու միմիայն Աստծուն, որ կապուած է միմիայն Աստծուն եւ որ որոշել է ծառայել միմիայն Աստծուն, որ խաղաղութեան մէջ է Աստծոյ հետ եւ որ խաղաղութեան առիթ է դառնում ուրիշների համար»⁸:

Երանի՛ արդարութեան համար հալածուածներին

Այս երանութիւնը, որը սկզբում Ղուկասի կողմից հասցէագրուած էր նրանց՝ ովքեր հալածանքներ են կրում Քրիստոսի անուան համար, Մատթէոսի Աւետարանում դարձել է արդարութեան զաղափարական, որն հարկաւոր է ապրել նաեւ հալածանքների մէջ⁹:

Եթէ հաւատալի նկատենք Հերոնիմոսի տեղեկատուութիւնը¹⁰, Պօղոս Թէբէացին, եգիպտացի առաջին միայնակեացը, հալածանքներից փախած մէկն էր:

¹ Nau 352.

² Նիչէտաս; Nau 77, 474, 495.

³ Պիմէն 4; Nau 451; PE III, 45, 10.

⁴ Eth. Coll., 13, 64.

⁵ Eth. Coll., 13, 74.

⁶ Բարսանուֆ 627.

⁷ Բարսանուֆ 677.

⁸ Parva Catechesis 39, Paris 1891, pp. 142-143.

⁹ J. Dupont, *Le beatitudini*, pp. 550-553.

¹⁰ Vita Pauli.

Իրականում հնարաւոր է, որ եգիպտացի քրիստոնեաներից ոմանք ապաստանած լինէին անապատում՝ խոստափելու համար հալածանքներից, ինչպէս Բարսեղի պապն ու տատը Պոնտոսի անապատներում: Ուրիշներ էլ անապատ էին ուղարկուում աքսորուելով եւ հետագայում կամովին մնում էին այնտեղ՝ սիրելով միայնութիւնը: Վանականների այս բոլոր նախահայրերը, որ փրկուել էին մարտիրոսութիւնից, այնուամենայնիւ կարողացան արժանանալ մարտիրոսներին վերապահուած երանութեանը, որովհետեւ այն թշուառ պայմանները, որոնց մէջ ապրում էին, պահանջում էին յիշուելի հերոսական քաջութիւն ու համբերութիւն: Բայց անկասկածելի է, որ վանականութիւնը ամբողջովին զարգացաւ՝ միմիայն երբ դադարեցին մեծ հալածանքները: Կարելի է մտածել, որ այս խոնարհ ու հեզ, ողորմած ու խաղաղասէր անձինք, անապատում հաստատուելով՝ չպէտք է որ երբեւէ չարչրկուէին մարդկանց կողմից: Եւ սակայն, պատմութիւնը մեզ տեղեկացնում է, որ արդէն 4րդ դարից իսկ սկսած, վանական միջավայրերը նոյնպէս ենթարկուել են այն խառնաշփոթութիւններին, որոնց պատճառն էին կրօնական եւ քաղաքական պայքարներն ու վիճաբանութիւնները Արեւելեան Եկեղեցում:

Իր պատմութեան ամբողջ ընթացքին, վանականութիւնը գերառատօրէն նպաստել է՝ ճոխացնելու մարտիրոսների երնային խմբերը, եւ միայն 4րդ դարի համար արդէն գիտենք բազում վանականների մասին՝ որոնք իրենց արիւնը հեղում էին Քրիստոսին հաւատարիմ մնալու համար: Ապոֆտէզմաներում յիշուում են միայն Աբբա Միլեզիոսի երկու աշակերտները, որոնց գլխատել էին՝ արեւին զոհ չմատուցելու համար¹, Աբբա Մովսէսը եւ իր վեց ընկերները, սպանուած՝ բարբարոսների ձեռքով², եւ սարակինոսների կողմից չարչրկուած եօթ միայնակեացները³: Ուրիշ շատ շատեր, Անտոնի նման, պատրաստ էին «վկայելու սեփական արեամբ» եւ դժգոհ էին՝ որ «իրենց չէին հասել դահիճները»⁴: Միշտ պատրաստ էին բարբարոսների ձեռքով մահանալու⁵, եւ վեհանձնութեամբ էին կրում սատանաների ու ամէն տեսակ փորձութիւնների հալածանքները, որոնք յաճախ շատ աւելի սարսափելի են՝ քան մարդկանց հասցրած տառապանքները: Վանականներից մէկը, որ «հալածանքների ժամանակ դաւանել էր իր հաւատքը եւ չարչարուել էր այն աստիճան՝ որ նրան մինչեւ իսկ նստեցրել էին հրաշէկ աթոռի վրայ», վանք վերադառնալով եւ իր խոնցը մտնելով բացականչում է. «Վա՛յ ինձ, դժբախտիս, որովհետեւ վերադարձայ բազում չարիքներ կրելու»: Ի նկատի ունէր սատանաների դէմ մղուած պայքարն ու մենամարտերը⁶:

Աթանասն արդէն Անտոնին անուանում է «խղճի մարտիրոս», վերջինիս խիստ ճշնութիւնների պատճառով⁷: Ապոֆտէզմաները մարտիրոսներին են նմանեցնում բոլոր նրանց՝ ովքեր «Աստծոյ համար բռնութիւն են գործադրում իրենց անձերի վրայ»⁸, նրանց՝ ովքեր «կամովին նուիրուում են զղջման վշտին ... որովհետեւ նրանց արցունքներն ընդունուում են որպէս արեան կաթիլներ»⁹: Բայց մարտիրոսներին յատուկ կերպով նման է այն եղբայրը, որն իր սեփական կամքից հրաժարուելով, յարատեւում է ծերերի հանդէպ հնազանդութեան մէջ¹⁰:

¹ Միլեզիոս 2.

² Մովսէս 10.

³ Կեղծ-Ռուֆինոս 200.

⁴ Vita Ant., 46.

⁵ Սիզոն 34.

⁶ Nau 469.

⁷ Vita Ant., 47.

⁸ Nau 119.

⁹ Nau 539; հմմտ. Nau 591.

¹⁰ Պամբո 3.

Յանձնարարելի է ընթերցումը այն աշակերտի տպաւորիչ ու հոգեշահ պատմութեան, որը տասներկու տարի հաւատարմաբար ծառայել էր «մի դիւրագրգիռ ու վատասիրտ ծերունու»։ Երբ եղբայրը մահանում է, մօտակայքում ապրող հոգեւոր Հայրերից մէկը տեսնում է նրան «մարտիրոսների դասում, որ մեծ համարձակութեամբ աղօթում էր Աստծուն ծերունու համար եւ ասում էր. "Տէր, ինչպէս որ ինձ ողորմեցիր իր միջոցով, այնպէս էլ իրեն խնայիր շնորհիւ Քո մեծ ողորմութեան"»։ Եւ այդ եղբօրը շնորհուեց այն՝ ինչ խնդրում էր. քառասուն օր յետոյ, ծերունին նոյնպէս մահացաւ եւ ընդունուեց յաւիտենական հանգստի մէջ¹։ Ինչպէս Վարք Հարանցի ուրիշ շատ պատմութիւններ, այս մէկը նոյնպէս, հետագայում ընդարձակուեց ու գեղեցկացուեց երեւակայութեան կողմից նրանց՝ ովքեր այն աւանդեցին բանաւոր կամ գրաւոր, բայց անշուշտ՝ դա ոչնչով չի վնասել Անապատի Հայրերի իրական ոգուն։



¹ Nau 551.